



Թ Ե Ր Թ Ը Տ Պ Ա Գ Ր Վ Ո Ւ Մ Է Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ա Ջ Ա Կ Օ Ո Ւ Թ 3 Ա Ս Բ

ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՐԹ - ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՐԹ - ԳՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՐԹ



Նառա Վարդանյան



Վերջապես ես մոտենում եմ մահվանն այն զգացողությամբ, որ գիտեմ նրա մասին ամեն ինչ. միայն փորձն է մակասում:

Գրողները ժամանակ են փողոցն անցնող ոտքերի վրա մտածելու կամ ցնցոտիներով աղջկան, ու բառը դառնում է կյանքի մասնիկ, ու իրենք են դառնում մտադրող մարդիկ ու ծակծկող ոտ ու նախադասարարները ինքնաստիճանում:

Տեսանելի, ներքին աշխարհների հաղորդակցության մեջ իրենց դասերն ենք մեզ համարձակում՝ հրումների, հողմների մեջ: Մենք հակված ենք մտածելու, որ նրանք կարող են ամեն ինչ իմանալ: Մենք դասեր ենք տալիս, որ արդարապես կյանքը կամ հայտնի ինչ է կասարվում երկրագնդի հակառակ կողմում:

Երբեմն դա հնարավոր է: Մեծ մասամբ՝ անհնար:

Երբեմն հակառակվում են Աստուծոն, ֆանդոն և արքայազնները: Ինքնաստիճանում կարող ես խախտել ինքնաստիճանը. ինքնաստիճանում:

Ու հենց այդպես՝ գոնե սեփական կյանքի սնունդ լինելու գաղափարները թուլանում է նրա (Աստուծո) հեռավար ցանկացած կերպ ու հրճվածից ծափահարել երկինքներին: Ինքնաստիճանում գրողն արդեն մեծ է նրա գոյությունը:

Ու հենց այդպես՝ գրողները ֆուր լցնեն ու կոչվենք գեղարվեստ, թե՛ սիրուհիների հեռավար դասեր ենք տալիս, թե՛ ֆառից ծափահարում ենք արյուն փսխես, թե՛ ծավալվես գնացի ռեյսերի վրա, թե՛ դասերը ֆառն զվարճ ու խեղճաճառ լինես, թե՛ դասեր ենք տալիս կանգնես ու թևերդ բաց մարմնով փորձությունների քննես, ու քեզ բարձրից թվա՝ ձեռքերդ ու ոտներդ հասնաս ձգվում են բոլոր ուղղություններով... Ասես ծուղակված չարի ու մահվան մեջ, ինչը դասեր ենք տալիս գուցարված կսավն է, որի առջև անցնում են... Յուրաքանչյուր ինչ է սանուն դասեր ենք տալիս: Ով կժխտի, թե ամեն ով կսանի իրեն հասանելի, որ բոլորովին նման չէ կողմից ընթացողի զգացածին: Այստեղ երևույթի ճանաչողությունն անցնում է հենց մեր ներաշխարհով:

Աշխարհն առանց ինձ էլ է առաջ գնում: Ի՞նչ է ինձ դասեր տալու, ասում է նա: Էհ, Վիրջինիա, դե՛ հավաքիր իրերդ, գնում եմ... Նկարված մարդը հեռու սարածության վրա կարող է իսկական մարդ թվալ, գուցե գեղը, ուր գնում ես, նկարում ես սեսել:

Տալիս ու ցուրտ ինձ համար այլևս նշանակություն չունեն, թեև հիշում եմ, նախորդ անգամ ամենասկզբում ինձ թվում էր՝ ցուրտ էր, սակայն այդ զգացումն արդեն անցել է:

Բա ձեռքերի ու ոտների բոլոր ուղղությունները...

Սահասիրություն և մարդասիրություն

Ամեն մեռել գիտ իրեն հեռ կը թաղե
Իր ողջ կուլան, իբրև մեռել կ'որոնցիմ...
Եղիա Տեմիրճիա

Եվ նա, երեքով, հիվանդությունից սմբած, կմախքացած, գոհին դարձնողին է ամրացնում... Նրա գոտու կորագիծը միտի փրկի իմ հուսահատ

Փորձը

Տոբյունը հայ գրականության ինքնաստիճանում վերաբերյալ:

Եղիան է. գիտության և բանաստեղծության կոչված եղիան:

Կյանքի ու մահվան հարցը ծիծաղելի խոսք չէր, մտածումի սևեռակն է և բառի սառնադան արդյունք նրա հոգեկան ու ստեղծագործական մղումն է: Նրա դասերն երեխաներ էին անվանակոչվում եղիան:

Ս. Թագավոր եկեղեցու առջև, ցնցոտիների մեջ, թիթեղյա տուփը ձեռքին: Տեղի մուրացկանները դժգոհեցին, բայց խաղաղվեցին, երբ տուփում հավաքված դրամը սվեց իրենց: Դրանից հետո մաքուր հագնված՝ հյուր գնաց ու դասեր էր տալիս մուրացկանի զգացածի և թվառության ճազամադի մասին:

Էլ են Լիսընը լուսանկարել սվեց դիակը՝ մեծադեզ զարդարում մահճակալում դառնած ճերմակ ժանեկազարդ անկողնում, ձեռնակ հագուստով, մոմի լույսի սակ, խաղաղված, գեղեցիկ դեմքով: Տառադանի նշան չկա: Մահվան զգացումը, որ անդամայն առաջանում է գրեթե բոլոր նման լուսանկարները ժամանակ, այստեղ բացակայում է, միակամայական իմաստում խաղաղություն, ուր սեթևեթում է հավերժական հանգիստը: Թեև սիկին Նիսընին մեծաուր հուղարկավորություն էր կազմակերպել, այնուամենայնիվ, թաղեցին գերեզմանատան դասի սակ, ֆանի որ ԻՆՋՆԱՍ-ՊԱՆ էր եղել (*Սակայն անբախտ նրա դին// Պարտի կողմից չարհմ*):

Բանականությունը, սառը դասողությունը, սրամաքանակվածությունը, անցումներն ու լուծումները եղիայի գրականության մեջ որոշիչ չեն: Որոշիչն է մոլորակալ լարվածությունն է, զգացումները, սրամաքանակները, երգանքները, ժամանակները, որ դասերն ու իրականության եզրագիծն են:

Եվ եղիան սեփական տոբյուն կոչ սված օձի դեռ դասեր էր տալիս մահվան ցուրտը: Ասեց կարմիր այսերն ու ուղիղ ֆայլոններին: Գրատեր Ասունը կամ Նիսընի հայր եղիան:

Ամայի ծովափերից ու ցուրտ դիակներից վախենում է, որովհետև նրա նմանները ժամանակ են ծովի հասակի խեղդված աղջկան ու ձուկ չեն ուտում և որովհետև ձուկն աղջկա ակնախոռոչներում թունելային զգացումով գնացել-եկել է, որովհետև, ծովը լողորդում է... Չե՞տ հայտնվում է մեծ լուսավոր դալիճն ու սկսվում է բարի գալուստ-հրաժեշտի դիմակահանդեսը: Աղակների եսկից նրան են նայում կենդանիների աչքեր: Սարսափում է: Վերջին անգամ նայել գոտու սկզբի կեսին ու առաստաղին ժամանակ ԱԶԶԸ:

Ասվածային:

Զրբոնում են կենդանիների աչքերը:

Բոլոր աչքերը մոտենում են:

Կամաց-կամաց մոտենում են:

Վերևից աչքերից վերնակը ծածկում է կաղնի այս աշխարհի հեռ:

Եվ երբեմն գրելն ընդհատվում է նախադասության կեսից:

Չկենտրոնանալու արդյունք է: Հիմա հասկանում եմ, որ մի աշխարհից մյուսը մարդու անցման ժամանակ հանկարծակի հոգեդարձի աղմուկը կամ նույնիսկ հանկարծակի ծնված միտքը մարդուն կես ճանադարից ես են բերում:

Ես ուզում եմ, ինչքան էլ հեռու գնամ, այնուամենայնիվ վերադառնամ այն տեղը, որտեղից ճամփա եմ ընկել:

1. Լուսանկարի մի օրինակը դասողություն է եղիան Չարեմի անվան գրականության և արվեստի թանգարանում:
2. Թունայան, «Մարտ»:

ՆԱՊՊԱԿ*...

Սազո Արեան



Առաջնագրի կրկնապատկար այս քաղաքին համար.

Որուն արգանդին մեջ,

Պահում են հյուսիս կապույտ ու սեւ.

Բացարձակ ճիշդին հասնելու իմ փորձերս,

Պիտի կախուղին անոր նեղ ու սեւեռած շեքերեն...

Ուր ես բանտարկեալի տեսքով,

Անթրաք եւ ոխերիմ,

Պիտի գմառի հայոց պատմության վերջին հերոսներուն մորթիները ծնտիս...

Պիտի փակցնեի յիշատակներս անոր փայտեայ ու հին պատուհաններուն,

Ու յետոյ

Չարածի բարձրանալի հորթուրիս տան երրորդ յարկը

Չեղեկելու հեռուն կեցած Պաղեստինի արձակագնիս...

Նապասա..."

Ինչքան երգեր կը քննան մեջդ հիմա,

Ու ես հիացկու աչքերով կը չափեմ փողոցներուդ երկարությունը...

Պատերդ կը խառնուին իրարու,

Եւ Պաղեստինի համար

Արին թափած ֆետայիներուն լուսեղն ժպիտը կը խառնուի

Լաւագոյն տղոց խիղիս ...

Պատը հին է

Չուն Մուսա Սառըրի բարակ պատկերը կայ,

Կայ եւ հորեղբայրս

Որ յիշողութեանս զարդատուիդ պիտի բանայ

Քանի մը սպիտակ խաղալիք երկարելու ձեռքերուս...

Կայ թալանուած մանկութեանս վերջին ճիշը

Նապասա..."

Կայ եւ պատերազմը

Անհոգ ու մարդասպան

Երբ բոլոր երաժշտությունները կը դադրին,

Ես պիտի փոխակերպուիմ նոր մորթուած սպիտակ աղանիկի

Երգելու համար կարոտդ ...

Գէշ արդկուած շապիկներս պիտի հաւաքեմ,

Լաթերս բերեմ պատշգամներէն,

Ու օսանա հորթուրիս պատրաստած փիլաւին մէջ հալիմ

Իբրեւ ծուկն կարօտի

Նապասա... ես քանի ընկեր կորցրեցի

Բոլորը հեռացան այս ափերէն,

Ու տուին ինձի լեզուն որ խօսիմ ...

Տուին լեզուն հին ու նուիրեալ,

Որպեսզի՝

Չպոռամ

Պիտի չպոռամ ձեր երեսին,

Մուր պիտի չքսեմ ձեր երեսներուն,

Չէ՛յ դուք անբանաստեղծ անտարբեր

Պիտի չլամ առաջուան պէս

Ես եկայ յաղթելու համար,

Նա՞պասա,

Ես յաղթած եմ ընդհանրապէս,

Ու մեղքերս գաւելու մի սպասեք

Որով ես բոլոր վերքերը դրած եմ ուսապարկիս մէջ

Որպեսզի հեռացումի պահերուն

Չըսեն սազոս փախաւ առանց լուրի:

Նա՞պասա, դուն պիտի մնաս

Բոլոր օրկանիք փոփոխություններուն դիմաց

Բոլոր արեւմուտքի բոգութեան դիմաց

Պիտի դառնաս իմ փարսանան,

Չուն ես մանկութիւնս պահեցի,

Մանուկ աչքեր, մանուկ թաթիկներ

Մանուկ հասակ

.....

Նապասա..."

Երգներս թող չխանգարեն բու Զիւրտ

Եւ Ասորի բնակիչներուդ ահագին անորորը

Ես թեզմե լուսցուելով կ'անցնիմ

Ու զարմանալի չէ որ երեսս պիտի լուսմ մզկիթիդ առջև,

Խնդրելու ողորմութեան վերջին դասը

Չիս այլահը կը լսե

Չիս բու այլահը է որ պիտի լսե,

Ես կը փոխեմ սլաքներս դէպի թեզ

Աղօթքի ժամերս կը սրբագրեմ

Այտերս կը լուսմ

Արդի հայ գրականության ընթացային բազմաթիվ իրողություններ տարաբնույթ անդրադարձներում երբեմն հակադիր մեկնաբանություններին են արժանանում: Մի կողմից՝ բարձրագույն հայտարարություններ են, որոնց բովանդակային հարթության մեջ արդի հայ գրականությունը ներկայանում է արժեքայնության ամենաբարձր սանդղակին՝ իբրև նվաճումների շքահանդես, մյուս կողմից՝ ժխտողականությունն է, որը կուրորեն սևով է ներկում ամեն ինչ: Հատկանշական է, որ երկու դեպքերում էլ նկատի են առնվում առանձին մասնավորություններ, որտեղ մեծ դեր է խաղում պատահականության կամ անձնավորման գործոնը: Այս պայմաններում չափազանց կարևորվում է արդի գրական ընթացքի որևէ մասնավոր իրողություն, երևույթ ընդհանրականության մեջ վերլուծող աշխատությունների, ուսումնասիրությունների երևան գալը, որոնք արժևորելով մասնավորը՝ միաժամանակ ներկայացնում են երևույթի իրական պատկերը:

Արմեն Ավանեսյանի «Արդի հայ դրամատուրգիան (1991-2008 թթ.)» (Երևան, 2011) մենագրությունն ահա միտված է այդպիսի մի բաց լրացնելուն: Այդ առումով՝ մի փոքր հավակնոտ է մենագրության խնդրադրության ճշգրտությունը: «Արդի հայ դրամատուրգիան» ձևակերպումը համակարգված երևույթի տեսություն ու պատմություն է ենթադրում, այն դեպքում՝ երբ չնայած շատ վերլուծաբանների ընդգծված լավատեսությանը, այնուամենայնիվ, իմ կարծիքով, արդի հայ դրամատուրգիան այդպես էլ չի ամբողջանում որպես շրջափոխային, ստեղծաբանական իրողություն, և եթե ունի համակարգային ինչ-ինչ դրսևորումներ, ապա միայն ու միայն պոեզիայի ու մանավանդ՝ արձակի հետ ունեցած ներքեռաժանրային հարաբերությունների պարագծում: Այլ խոսքով՝ այլ սեռի համակարգվածությունն է տարածվել դրամատուրգիայի վրա այն չափով, որ քանով որ գրական այս սեռը կրում է մյուս սեռերի հատկանիշները: Գուցե հենց այս հանգամանքով է նաև պայմանավորված դրամատուրգիային գրաքննադատական անդրադարձների սակավությունը: Ուստի ճիշտ կլիներ, որ Ավանեսյանը իր մենագրության վերնագիրը սահմաներ որպես «Արդի հայ դրամատուրգիայի հիմնախնդիրները», քանզի այդպիսի խնդրադրությունն ավելի ճիշտ է արտացոլում հարցի դրվածքը, մասնավոր՝ մենագրության շարադրանքը հենց այդ միտումն էլ ապահովում է:

Անկախ այս ամենից՝ Արմեն Ավանեսյանի մենագրությունը, ըստ էության, առաջին հիմնավոր ուսումնասիրությունն է՝ մկիրված արդի հայ դրամատուրգիային, ու որ կարևոր է՝ այն կատարվել է մյուսի չափազանց ընդգրկուն ու համապարփակ ծավալի հիմամբ, տեսական պատշաճ պատրաստվածությամբ, վերլուծական բավականին բարձր մակարդակով: Չափազանցած չեն լինի, եթե ասեն, որ Ավանեսյանը այնպես է կառուցել իր ասելիքը, որ մենագրությունն արդի հայ դրամատուրգիայի մասնավոր հատկանիշներին տեսական քննություն լինելուց զրուտ, դրսևորում է նաև ժանրի նորագույն պատմության հատկանիշներ: Այլ խոսքով՝ Ավանեսյանը մյուսի, այսպես ասած՝ դիմադրությունը, կարողացել է հաղթահարել միանգամից մի քանի հարթություններում:

Մենագրության կառուցվածքը պատճառաբանված է վերլուծվող գրանյութի բնույթով ու առանձնահատկություններով: Միանգամից ասեն՝ «Ներածությունում», «Ժանրային համակարգը», «Կառուցվածքային խնդիրները», «Առանձնահատուկ ու ընդհանրականը» գլուխներում, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, Արմեն Ավանեսյանը, իբրև համակարգող, քննաբա-

նող, վերլուծող արել է շատ ավելին, քան այդ հնարավորությունն ընձեռում է արդի հայ դրամատուրգիան իբրև մենագրության գրանյութ:

Ասածս մի կողմից Ավանեսյանի կա-

վում, որի պատճառով մենագրության այդ հատվածը առանձին դիմանկարի տպավորություն է թողնում, և խախտում է աշխատության կառուցիկությունը մի կողմից, արժեքայնության հավասարա-

Արմենիկ Նիկողոսյան

ԱՐԴԻ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ՝ ԳԻՏԱՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

տարած հսկայածավալ ու բարդ աշխատանքի փաստարկումն ու գնահատումն է, մյուս կողմից՝ արձանագրումը մի երևույթի, որը, բարեբախտաբար, մենագրության մեջ որակ չի կազմում, և, վստահաբար, ոչ այնքան Ավանեսյանի մեղքն է, որքան գրանյութի: Խոսքը վերաբերում է գեղարվեստական գրանյութը գիտական ասելիքին հարմարեցնելու մտայնությանը: Դա նկատելի է հատկապես մենագրության առաջին ու, իմ կարծիքով, լավագույն՝ «Ժանրային համակարգը» գլխի «Աբսուրդի դրամա» և «Նոր դրամա» ենթագլուխներում: Ներկայացնելով ժանրային զարգացումների տեսական, գրապատմական բավականին հարուստ համապատկեր, Ավանեսյանի խոսքը մի տեսակ արհեստական է դառնում, երբ ժանրային վերլուծվածներկայացված տիրույթներում փորձում է վերլուծել նաև արդի հայ դրամատուրգիայի իբր համապատասխան երևույթներ: Եվ, ընդհանրապես, առաջին գլխում այլ առիթներով էլ նկատելի ժանրային ոչ ճիշտ, երբեմն իրար հակասող սահմանումները (որքան էլ Ավանեսյանը պնդի, թե «ժանրաձևերի մեր առանձնացումը պայմանական է», այնուամենայնիվ, պայմանականության մեջ էլ հստակություն պետք է) կրկին գրանյութից են գալիս, պիեսների որոշ հեղինակների տարտամ ժանրագագողությունից ու ժանրագիտակցությունից, չիմացությունը ինքնատիպության փոխարեն սահմանելու մտայնությունից, որովհետև մենագրության մեջ հստակ երևում է, որ Ավանեսյանը պատրաստված է տեսանելու առումով և երբեմն ուղղակի շվարում-շփոթվում է իր իմացածի ու հեղինակային բնորոշումների ու անկապ կառուցումների հակասությունից:

Եվ բարեբախտություն է, որ ընդհանուր գրաբանական դաշտում կան առանձին անհատականություններ, դրամատուրգներ (առաջին հերթին՝ Ադասի Այվազյան, Գուրգեն Խանջյան, Պերճ Ջեյրուհյան, նաև՝ Կարինե Խողիկյան, Նորայր Ադայան), որոնք ստեղծագործությամբ, դրական առումով, հարմարվում է արդեն Ավանեսյանի գիտական ասելիքը: Այդպիսի դեպքերում Ավանեսյանի վերլուծումները արդեն հավասարակշռված են, ասելիք ունեն և իսկապես օրինաչափություններ են վերհանում, հիմնախնդիրներ են ցուցանում: Եվ լավ կլիներ, որ գոնե մենագրության այս գլխում Ավանեսյանի վերլուծությունները կատարվեին լավագույն օրինակների պարագծում, ինչը ավելի հստակ եզրահանգումներ անելու հնարավորություն կտար: Ցավոք, այս առումով Ավանեսյանն այնքան էլ հավասարակշռված չէ և հաճախ է համահարթեցնում երևույթները, հեղինակներին, տեսական դրույթները երբեմն հիմնավորելով շարքային հեղինակների շարքային իրացումներով:

Երբեմն էլ ավելի մանրամասն է վերլուծում դրամատիկական երկը, քան դրա կարիքը կա: Եթե, օրինակ, Ադասի Այվազյանի, Գուրգեն Խանջյանի պիեսները մեկնաբանվում են լոկ որևէ քննվող հարցադրման տիրույթում, ապա Վահան Վարդանյանի պիեսների դեպքում ընդհանրական վերլուծություն է կատար-



կշռվածության գործոնը՝ մյուս կողմից: Թեպետ «Ներածության» մեջ Ավանեսյանն ուղղորդում է, թե «կարևորել ենք դրամատուրգիայի» իբրև գրական իրողության մեթոդաբանական համակարգումն ու առկա օրինաչափությունների ներկայացումը», այնուամենայնիվ, նա հաճախ է երևույթները բացատրում, քննադատում կամ դրվատում տեքստից անդին պատճառաբանություններով: Օրինակ՝ փոքր դրամայի ժանրային իր սահմանման մեջ Ավանեսյանը գրում է. «Որպես փոքր դրամա առանձնացրել ենք այն պիեսները, որոնք նախևառաջ ժամանակային առումով են փոքր և մինչև մեկ ժամ տևողություն կունենան բեմադրվելիս»: Սահմանումը սխալ չէ, սակայն սեփական առաջադրության ժխտման պես մի բան է դառնում:

Այսպիսի անհետևողականության օրինակներ էլի կան, և լավ կլիներ, որ Ավանեսյանը հետագայում հստակեցներ իր մոտեցումը այս կամ այն խնդրի վերաբերյալ:

Այդ առումով մենագրության «Կառուցվածքային խնդիրները» վերնագրով երկրորդ գլուխը առավել համակարգված է: Ավանեսյանն այստեղ ենթագլուխների տեսքով առանձնացրել է հետաքրքիր հարցադրումներ՝ «Խաղը և դրամատուրգիան», «Գործողության քայքայումը. վիճակի դրամա», «Խոսք և երկխոսություն», «Ռեմարկները», որոնք վերլուծվում են մասնավոր օրինակներով:

Ավանեսյանի մտքի վերլուծական ընթացքն այստեղ առավել նպատակասլաց է, մեթոդաբանական ու ձևակերպումային խճողումներ չկան, պարտադիր առկա ընթացիկ եզրահանգումներն ու վերջնական եզրակացությունները փաստարկված են ու, ամենակարևորը՝ բխում են մյուսից: Այդպես, օրինակ, վերլուծելով խաղի կառուցաբանական դերակատարությունը արդի հայ դրամատուրգիայում, Ավանեսյանն իրավացիորեն եզրակացնում է. «Խաղը որպես գրական երկի կառուցվածքային առանձնահատկություն, առկա է արդի հայ դրամատուրգիայի զարգացման ընթաց-

քում, սակայն հիմնականում արտահայտվում է մակերեսային տարածակառուցման, քան խորքային կառուցում-հիմնավորումներով»:

«Առանձնահատուկ ու ընդհանրական» վերնագրով երրորդ գլուխը միտված է ընդլայնելու մենագրության բովանդակային ընդգրկումների շրջանակը՝ իրականության և երևակայության, կյանք-թատրոն հարաբերությունների քննությամբ, հերոս-գործող անձի, թեմատիկադրամատիկական բազմազանության հարցադրումներով: Դրանք որակված են իբրև «հարակից խնդիրներ», ուստի՝ համաձայն են Ավանեսյանի այն մտքին, թե առանձնացված հարցադրումները «թեպետ մեծ չափով չեն որոշարկում ժանրի ներկա դիմագիծը, սակայն որոշակի առանձնահատկություններ պայմանավորում են», ուստի դրանց վերլուծությունը ներդաշնակվում է մենագրության ընդհանուր հարցադրումներին:

Արմեն Ավանեսյանի կատարած աշխատանքի խոսուն վկայությունը մենագրության վերջում իբրև «Հավելված» տեղակայված արդի հայ դրամատուրգիայի մատենագիտական ցանկն է: Չի կարելի ասել, թե այն ամբողջական ու թերություններից զերծ է: Մասնավորապես՝ կան որոշակի բացթողումներ: Նշեմ մի քանիսը:

Լևոն Խեչոյանի «Սպասում» պիեսը տպագրվել է նախ գրողի «Հունիսի հինգր և վեցը» ժողովածուում, այնուհետև միայն Ավանեսյանի մատնանշած «Դրամատուրգիա» հանդեսում: Կամ՝ Նորայր Ադայանի «Կինը և տղամարդը» պիեսը տպագրվել է, նաև առանձին գրքով, այնինչ Ավանեսյանը հիշատակում է սոսկ գրողի «Բեմական փորձ» ժողովածուում ընդգրկվածի մասին: Վահան Թամարյանի «Լուսաբաց-ծոն» պիեսը բացի «Նոր-Դար» հանդեսում տպագրվելը, հրատարակվել է նաև հեղինակի «Արյունաբանություն» գրքում և այդ փաստը մատենագիտության մեջ արձանագրված չէ և այլն: Բացի այդ՝ կարծում են, որ Ժիրայր Անանյանի պիեսների դեպքում պետք էր ճշտել դրանց առաջին հրատարակության տարեթիվը, քանզի 1991-2008 ժամանակային մասնավորմամբ մատենագիտական ցանկում ներառված են պիեսներ, որոնք որքան են գիտեն բեմադրվել են դեռ 1980-ական թթ., օրինակ՝ հանրահայտ՝ «Տաքսի-տաքսին»:

Ցանկում կան նաև մի քանի՝ կուզենայի մտածել՝ վրիպակներ: Սաղաթել Հարությունյանի պիեսների ցանկը ներկայացված է Հարություն Սաղաթելյանի անվան տակ, իսկ ահա Լևոն Սաղաթելյանին թեկուզև գրականության ցանկում ներառելը պարզապես անախրոնիզմ է, քանզի այս դրամատուրգը ապրել ու ստեղծագործել է տասնամյակներ առաջ:

Եվս մեկ կարևոր վերապահում. կարծում են, որ սխալ է սփյուռքահայ հեղինակների դրամաների ընդգրկումը մատենագիտական ցանկում երկու պատճառով: Նախ՝ մենագրության մեջ իբրև գրանյութ չի օգտագործվել սփյուռքահայ դրամատուրգիան, և երկրորդ՝ եթե Ավանեսյանը ցանկում էր մատենագիտական ցանկում ներառել նաև սփյուռքահայ հեղինակների դրամաները, ապա դա պետք է աներ հնարավոր ամբողջությամբ, և ոչ թե պատահականորեն, կամ ձեռքը ընկածի տրամաբանությամբ: Այնուամենայնիվ, մատենագիտական այդ ցանկը կարող է մեկնակետային լինել արդի հայ դրամատուրգիայի հետագա ուսումնասիրողների համար:

Այս ամենով հանդերձ, Արմեն Ավանեսյանի «Արդի հայ դրամատուրգիան» (1991-2008թթ.) մենագրությունը, մի շարք առումներով, լրացնում է այն բացը, որ կար արդի հայ դրամատուրգիան լուրջ ուսումնասիրության ենթարկելու ասպարեզում:



Սագո Արեան

«««««««««« I

Ու ծունկի կու գամ արեւելքիդ համար, Կիրաւոր արեւելքիդ՝ Նապասաա Նապասա՞՞՞՞ զի դու ես ճանապարհ. Զանկ-բանի ֆետայիներ եւ իմամներ բեզմէ անցան Որովհետեւ հոն էր երկրին բանը Աղբատներուն էր տրուած երկրի խօսքը Մնացածը բուն էր Նապասա՞՞՞՞ :

Այսօրը աղօթելու օր է, Ել անհաւատի աղօթքը թափէ Նապասայի առաստաղներէն ...

Հոգ չէ որ ընկերներդ արեւմուտք կը վազեն, Կը վազեն ՝ մեծ մտադացին, Բինք ֆլոյտի մենծ մտադացին մէջ մտնելու Հոգ չէ այս ախտը, Դուն սեղան պիտի խոստի իմամներուն եւ աղբատներուն հետ....

Նա՛պաս Դուն պիտի մնաս հարազատ իմ բաղաբս Ուր ամէն մեղքէ յետոյ, Սրբելու համար մարմինս ծունկի եմ գալու Իմամ Մուսա Սատըրի պատկերին առջեւ Գրկելու համար մանկութիւնս Գողցուած ու հեռացած Թալանուած ու պատերազմէն վիրաւոր մանկութիւնս Նապասա՞՞՞՞ հօգը ես : Զաղաբս ես:

** ՆԱ՞ՊԱԱ . Պէրոյի հայտնած Պուրճ Համուտի կից գտնուող շրջան, որ Լիբանանի բաղաբացիական պատերազմի հանգրուանին բնական սահման էր դարձած, հայկական շրջաններուն եւ Պաղեստինեան դիրքերուն միջեւ: Նապաս արաբերէն կը նշանակէ աղբիւր:*

ՍԵՐԸ

Կնոջս՝ Ա.Թ.ին

Երանելի անունս Գրուած էր դեղին տառերով Այն փողոցներուն մէջ ուրկէ Պիտի անցնէի իմանալով բոլոր խենթերուն անունները... Տաղ, սոնետ կամ բերթուած ...

Վերջս բերիք դուն, երբ շալս գետին նետելով Ցեխով պատեցիր Մեղքերս եւ թափօրին մօտենալու կարելիութիւնը ... Չիս Դովտի տղամարդ ըրիր... Զու մէջդ ծուարած բոլոր կասկածները ռեհանի պէս կածին, սիրելիս Կ՛աճին ամէն օր Խեղդուելու պէս կ'ընես, երբ հարց կուտաս, որ ինչու սերը չեմ գրեր. Պիտի ըսեմ. Սերը կ'ապրիմ բու մէջդ. Սերը ամբողջովին ծալապատիկ կը խոստի, Մեր կապոյտ ելակներու սեղանին ... Ու մեր բառերը աղօթքի կոհակներ կը դառնան: Պիտի ըսես Որ արագիլները չեկան այս տարի: Այս տարի մայիսին պիտի չկանգնիմ վեմին վրայ Որ յուզումի բզկտուած կոկորդոզ լուամ իմ յիմար մեղքերես.... Զաղաբը, ուր կ'ապրիմ հոգիս Զաղաբը, ուր կը բնակիմ Բոզունակ Պէրոյի լեռնէն. Իր սփիւռքի նախարարութեան ասֆալթապատ ճանապարհներով, Իր խելագար հորեւացիով, Իր մունետիկ Աբրահամ հայրով -Որ տան կոչնակն է - Տխուր պահերուս զիս ժանգէն հանող , Չիս միւնչելու Նարինջի պարտեզները տանող

Ո՛չ բառարան, ո՛չ ժամագիրք, Եւ ոչ անտարան Հոգիս դալար հոգի, Մատներդ հին եւ ստեղնաշարին վրայ, Ու կոպերուդ տակ կերեւին մորմոքներս Ինչ խօսք աշխարհի չարացած դիմակներուն մասին. Ու փողոցներուն դատարկ, որ մեռելի ստուկներ են հիմա: Բոլորը հոն ցեխին մէջ կը պարեն, Գցելով, կեղտելով, բոզանալով Բոլորը հիմա հայ-թուրք յարաբերութեան մասին կը բարբառեն... Նստած պատշգամբը, Արիւնլուայ մայրերէն հասնելով միւնչելու անտարանները Անիի Ուր թրքուհիներ իրենց ցից մասերը կը քանդակեն Լուսաւոր տաճարներու անտարանած պատշառնի վրայ

Դովտի Տղամարդ, Դովտի Տղան կը ճամբորդէ, Միևնակ կը ճամբորդէ հեռու այս տափաստաններէն Ցեխտաճ շալս վերցնելու Զաղաբական ռապիւններու առջեւէն Բոլորը հերետիկոս եւ Բոլորը սնոտի....

Սերը՝ սիրելիս Կանաչ աչքերու պէս պիտի պահէ զիս Այն միևնակ ցուրտ գիշերներուն Երբ Զրիստոսի խաչին անուկով ես կը մորթի խտելներս բոլոր, Եւ կը խաբէի ձեզ Ըսելով որ Աստուած՝ ինքը Արեւելքի ծնունդ էր.... Ըսելով որ Աստուած՝ ինքը Չէր սիրեր զարեշուր, այլ՝ զինի Ըսելով, որ ինքը Աստուած Չի բնակիր մեղաւոր հոգիի սենեակներուն մէջ:

Մի գրոհեր, Հարց մի տուր թէ ո՛ր էի ես . Մեղքերու տոպրակներս դրան ետին կախեցի Բաճկունիս մէջ երեւոյր դրամի մակրուքներով.. Գնա սիրելիս Արաբերէն թերթ բերելու ... Վաղը ծագէ ի ծագ Պիտի սիրեմ Զեզ Սերը բառերով չէ. Սերը խոստումներով չէ, Սերը մեզ ալիքներէն պահող, Փոքրիկ նաւ է անսայթաք Ամենավերջին կայմն է. Սերը դուն ես սիրելիս, Սերը դուն ես Սերը ես եմ Երբ Դովտի կնոջ բերանը կը բակեմ այն լաթերէն, Որ կապուած են երկար ատենէ ի վեր: Վերջին ճիչն է Սերը ... Սեղանին դրուած կարմիր թէյի բաժակն է վերջին: Սերը վերջակետով չի բանիք Սերն անաւարտ է Եւ անգուր, Սերը փրկագինն է մեր միւս կեանքերուն ...

Սերը սպասուեմ այն ճանապարհին .. Որ կը հասնի միւնչելու հայրենիքդ Ես անհայրենիք ու անկարօտ Կտոր մը հող լեցուր մարմնիս Կտոր մը հայրենիք տեղադրէ ոսկորներուս մէջ Ես անհայրենիք- անկարօտ. Սիրէ զիս Ես անհայրենիք -անկարօտ Ըսէ թաքսու վարորդին որ աչքերս եմ մոռցեր Խնձորեսկի խոր Խորահորիկուրդ Կիրճերուն մէջ... ..

Սերը Սիրելիս... Սիրէ զիս: Միւնչելու հատնիմ. Եւ ցեխէն հանեմ կարմիր շալս.. Ցեխէն հանեմ, Իմ անակնկալ ժամանումիս Տոմսը վերջին :

Ես այն ատեն Կը դառնամ հոգի, Ես այն ատեն հոգիս կը գրկեմ... Սերը սիրելիս, Դուն ես Սերը ես եմ: Սերը սիրելիս, Սիրէ զիս Որ չմնամ Դարու անտարաններուն բեռան տակ .. Որ չմեռնիս, Որ չմեռնիմ սիրելիս ...

Կարեն Անսաւյան



ՖԵՅՍԲՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳՐԵՐԻ՝ ՀԱՎԱՔԱԾՈՒ

*** Միւնչն գլխիցդ մեծ գործեր չբռնես՝ գլուխդ ավելի մեծ չի դառնա:

*** Իմ նյարդային համակարգը նախաստեղծ է լեռներում այծեր դառնելու համար, և ես ամեն օր ափսոսալու առիթ եմ ունենում՝ այն ըստ նշանակության չօգտագործելու դաճառով:

*** Հեղափոխությունը ժայռագույն բզեզի ընդվզումն է ժայռի դեմ:

*** Համբերի, գործս ործենեմ՝ գալիս եմ, մտնեմ դրությանդ մեջ:

*** Ես հոգնած մեռնում եմ ֆեզ համար:

*** Լուսանկարելու կիրճ՝ սիրելու կիրճ է:

*** Չնայած սսանդառս դիրքեր լավ եմ իրացնում՝ ոչ սսանդառները նախընտրում եմ:

*** ASENQ VO4! LATINATAR HAYERENIN.

*** Թեկնածուս չընտրվեց, ԲՐԾ...

*** Հիմ հունական փիլիսոփաներից ամենաազատ ֆեզ եմ սիրում, կյանքս:

*** Պեճ չէ թերազնախառն հալալ կաթնակերի առկայության գործոնը ֆաչալ ռդա-մարդու կյանքում:

*** Անսաւայն. ամրացնում է ասամներն ու բարձրացնում դոնեմնիս:

*** Ո՞՞՞ Ֆեյսբուքին՝ Մեծ դաճիք օրջանում:

*** Մարմինդ կերամք, արյունդ խմեցիմք ու... վերադարձամք ֆեյսբուք:

*** Ֆոտոսով կհեռացնեն անցանկալի մագածած-կույթ և կավելացնում ցանկալի բաներ:

*** Եվ ինչ իմանաս՝ ինչ է ա-

զասությունը, եթե զոնե մի 50 մեթր սկլոր չես վազել ծովեզերով:

*** Գարուն ա, զաշկի ձվերը ֆուր են գալիս:

*** Հայերի աշխարհ, մարմարի աշխարհ, գրանիտի աշխարհ, հագուստի աշխարհ, կոշիկի աշխարհ, մանկական աշխարհ, գրքերի աշխարհ, մոլիբդենի աշխարհ, խորովածի աշխարհ, բոլոս ու զայլի աշխարհ, թամամ աշխարհ... 6 մ²-ն աշխարհի հիմնելու համար ֆիչ՝ աշխարհակալ զգալու համար բավարար է. այստեղումը՝ զիգանսո-մանիա-կառլիկիզմ:

*** Վաճառվում է կախվելու հիանալի կոմոլեյեզ՝ Կիլիկիա առագաստանավից ցրած վուլեռ դարան, սովետական ռաբուրեճ՝ անանուխի հոսով ֆրանսիական օճառ՝ չօգտագործված:

*** Գործից ազատ ժամերին ճաշակի ընկեր եմ փնտրում. աշխատավարձի օրը և կիրակիներին՝ առանձնակի ֆուրբոյամբ:

*** Սերը՝ իզակամ: Ծննդյան օր՝ չի նշում: Ամուսնական կարգավիճակը՝ դա վաղուց էր, մի հի-ցեցրե էր սակամի մասին: Փնտրում է՝ առանց վաճառ-վորությունների, բարեհամբույր ու բարեկիրթ, արական սեռի կենսուրախ խառնվածով ըուն:

*** Պայթյուններ արևի վրա. մոլորակով մեկ համաճարների ծնվելու համար պայմաններ... Հիդրոսոնիկ հորանջից ավել Երևանը չի ձգում:

*** Իմ վարսավիրը 70 տարեկան է, վաճ է տեսնում ու ձեռքերը դողում են, բայց ես արդեն 4 տարի է նրա հաճախորդն եմ, որովհետև մեկ է՝ իմ մագերն անհմար է լավ կսրել ու մեկ է՝ 35-ում լրիվ ֆաչալ եմ լինելու:

*** Ինչքան հնարավոր է երկար, ինչքան հնարավոր է բուռն սիրեմ իրար և տեսական ֆիզիկական, թե չէ գրականությունը ֆաւ ւրսի ֆաւ միսթարամք է:

Հանրագիր՝ սոցիալական ցանցում հանրայնորեն տեսանելի գրվող հարողորհագրություն, այստեղ կոչված՝ սասոս: Բառն այս նշանակությամբ առաջին անգամ օգտագործվել է հեղինակի կողմից:

«««««««« 4

1, էլեգիա 3, տողեր 1 — 4): Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում պրոֆ. Արթուր Մանվանյանին, որ հանձն առավ հատվածի բնագրային բարգձմանությունը:

3. «Մշակույթը դարձել է ռազմական ճամբար...» — Ալմանախի մեջ՝ «Մշակույթը եկեղեցի է դարձել: Տեղի է ունեցել եկեղեցի-մշակույթի առանձնացումը պետությունից: Բարձրաշխարհիկ կյանքն այլևս մեզ չի վերաբերում...»:

4. «Կատուլյուսի արձաքն փողը...» — հմմտ. Օ. Մանդելշտամի «Հայաստան» շարքի (1930) բանաստեղծություններից վեցերորդի հետ՝ «Հավիտյան դեպի Ասիայի արձաքայն շեփորները բռնող...», տե՛ս Օսիպ Մանդելշտամ, Մեզանոմ /Ռուս. բարձր.՝ Հ. Բեյլերյանը/, Ե., Ապոլոն հրատարակչություն, 1992, էջ 54:

5. Բառացի՝ «Մեր ձգտում ենք Ասիայի հայտնի քաղաքներին» (լատ., Կատուլյուս, XLVI: 6)

6. «Հանց մութ ջուրը, ես խմում եմ պղտոր երկինքը...» — հատված Օ. Մանդելշտամի «Քույրեր՝ ծանրություն և քնքշանք, ձեր նշանները միատեսակ են» բանաստեղծությունից (1920):

7. «Հարկ չկա հնարել սեփական պոետիկա» - Այդուհետ այլ մանախում հաջորդում է առանձին ենթագլուխ. «Խոսքի, շարժման և ձևի նկատմամբ կիրառվող վերլուծական մեթոդը լիովին օրինակալի և հնուտ վարժած է վերջին ժամանակներս ավերումներն արվում էին արվեստի գույտ ձևական նախադրյալներով: Անկույտ, փառույթ, նեխումը այդ ամենը դեռ *décadence* է: Բայց դեկադենտները քրիստոնյա նկարիչներ էին, իրենց տեսակով՝ վերջին քրիստոնեական տառապյալները: Փոտուի երաժշտությունը նրանց համար հարության երաժշտություն էր: Բողոքի *Charogne*-ը քրիստոնեական փատության բարձր օրինակ է: Բարձրովին այլ է ձևի գիտակցաբար ոչնչացումը: Ցավ չունեցող սուպրեմատիզմ: Երևույթների դեմքի ժխտում: Հաշվարկված ինքնասպանություն, հանուն հետաքրքրության: Կարելի է ընտրել, կարելի է և դասավորել, կարծես թե փորձարկվում է ձևը, իսկ իրականում նեխում և փտում է հոգին (ընդամենը՝ հիշատակելով Բողոքի, ես ցանկացա հիշեցնել նրա նշանակությունը իբրև ճգնաժամի՝ *martyre*** բառի քրիստոնեական բացարձակ իմաստով): **Լեչ (Ֆրանս.)* - խոսքը Շ. Բողոքի «Լեչը» (1843) բանաստեղծության մասին է: ***Մարտիրոս, նահատակ* (Ֆրանս.) - տե՛ս Շ. Բողոքի «Մարտիրոստիկ» (1843) բանաստեղծությունը: Տե՛ս *Շառլ Բողոք*, «Չարի ծաղիկներ»: [Բանաստեղծ., պոեմներ] /Ֆրանս. բարձր., առաջաբանը և ծանոթագր.՝ Հ. Բալսեյիցյանի/, Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1990, էջ 40 և 120:

8. «Հանց շեփորականչ է հնչում սպառնալիքը՝ խզված Դեր-ժակի կողմից բարե տախտակին» - Նկատի ունի *Գ. Ռ. Գեր-ժակին* «Նեխվածության մասին» (1816) անավարտ բանաստեղծությունը: Այդ բանաստեղծության ինքնագիրը՝ գրված բարե տախտակին, պահպանվում է Ռուսական գրականության ինստիտուտում (Պուշկինյան սalon):

9. *Կոնստանտին Լեոնտ* (Константин Николаевич ЛЕОНТЬЕВ, 1831-1891) - ռուս դիվանագետ, կրոնական մտածող, փիլիսոփա, գրող, գրական քննադատ, հրապարակախոս, ուշ շրջանում հարել է սլավոնաֆիլներին: Լեոնտյան ակնարկումները առկա են Օ. Մանդելշտամի «Բառ և մշակույթ» (1921), «Բառի բնույթի մասին» (1922), «Ժամանակի աղմուկը» (1925), «Եգիպտական դրոշմանիշ» (1928) ծրագրային ստեղծագործություններում: Իսկ ընդհանուր առմամբ՝ Օ. Մանդելշտամի ստեղծագործության արմատական համակարգում ծածուկ առկա է լեոնտյան շերտը:

10. «Նա, ով սիրո ունի, պետք է լսի, ժամանակն է...» — Օ. Մանդելշտամի «Փառաբաններ, երբայրներ, ազատության մրճնալները...» (1918) բանաստեղծությունից:

11. «Մի՞թե իրը բարի տիրակալն է» — հմմտ. «Բառը՝ ստեղծված մի իրից մյուսը գնալու համար, ըստ էության իսկապես ենթակա է տեղափոխման և ազատ է: Ուրեմն՝ այն կարող է անցնել ոչ միայն մի ընկալվող իրից մի այլ ընկալվող իրի, այլև ընկալվող իրից այլ իրի մասին հիշողությանը...» (*Ա. Բերգսոն*, Մետաֆիզիկայի ներածություն, Ստեղծարար էվոլյուցիա /Ֆրանս. բարձր.՝ Ա. Մուրադյան/, Ե., Սարգիս Խաչենց հրատարակչություն, 2003, էջ 215):

12. Բառացիորեն՝ «Հեռացրո՛ւ պերճախոսությունը և պարանոցը նրա ոլորի» (Ֆրանս., Պոլ Վեռլենի «Art poétique» բանաստեղծությունից):

13. «Եվ քաղցր է մեզ համար սուկ ակնթարթը ճանաչման» — Օ. Մանդելշտամի «Tristia» (1918) բանաստեղծությունից:

14. *Տարխտուրյան* (талосотария) - հին հուն. γλωσσα (glossa) «լեզու» և λάλησ (lalia) «պատարկախոսություն, բորվանք, բլբլոց»): 1) երևույթ, երբ խոսողը արտաբերում է անիմաստ խոսքեր և բառակապակցություններ, որոնք սովորաբար պահպանում են խոսքի լոկ ինչ-ինչ նշանները (թափն ու ռիթմը, վանկերի կառույցը, տարբեր ձայների հանդիպող հարաբերական հաճախականությունը): Հանդիպում է հոգեկան հիվանդների մոտ: 2) Հնագույն որոշ կրոնների (շուներների) և քրիստոնեական առանձին աղանդների կրոնական պաշտամունքների տարր: Հաճախ (հատկապես աղանդավորների մոտ) խոսողը խորապես համոզված է, որ նա խոսում է իրապես գոյություն ունեցող լեզվով: 3) Տարխտուրյանը նշանակում է մաս ձայների և բառերի զանազան զուգորդումները, որոնք կորցրել են իմաստները, ինչպես, օրինակ, հանդիպում են հնալատությունների, ժողովրդական երգերի կրկնեղերի, մանկական խաղերի, երգերի և այլնի մեջ: Այն հանդիպում է և գեղարվեստական գրականության մեջ. ֆուտուրիստների վաղ շրջանի ստեղծագործություններում առաջադրվել էր իբրև գեղարվեստական ստեղծագործության եղանակ, հատկապես Վելմիր Խլեբնիկովի ստեղծագործություններում: Չափ մեջ տարածված է համանման մի եղանակ՝ *սքեթը*, որը վոկալ իմպրովիզացիոն երգեցողություն է, երբ ձայնն օգտագործվում է երաժշտական գործիքը նմանակելու համար, իսկ երգեցողությունը գուրկ է բառային իմաստավորված ծածկույթից:

15. «Լսե՛ք երգն այս աղոտ...» (Ֆրանս.) — Պ. Վերլենի «Ecoutez la chanson bien douce» (բառացի՝ «Լսե՛ք բըրուշ երգը...») և «Art poétique» («Rien de plus cher que la chanson grise...») — «Աղոտ երգից բանկ բան չկա...») բանաստեղծությունների բարկությունն է:

16. «Պետք է ցորենը շաղ տալ երբեք» - հմմտ. Օ. Մանդելշտամի «Կրկին աններդաշնակության պատերազմները...» (1923) բանաստեղծության «Իսկ երկինքը գալիքով է հղի՝ հուռքի երթերի ցորենով...» տողերին: Այնուհետև ավանախում, այդ տողից հետո, հաջորդում է «Գասական պոեզիան հեղափոխության պոեզիան է» ամփոփիչ տողը:

Ծավել է 1975թ.-ի մայիսի 25-ին, Բուլոնիայում: Սկզբում հայտնի է դարձել իբրև մոդել և լուսանկարիչ: Գրում է 2000 թվականից: Տրասուրակել է «Տիկնիկը, որը հազում է» դրաման, ինչպես նաև 8 վեպ, որոնք արժանացել են Բնաստեղծության մրցանակին: Նրա նովելներն ուղում են համաշխարհային վարդիգ ու սուսսակափշից կազմված պսակի հետ: Գրանք պատմություններ են սղամարդկանց և կանանց մասին, ծնողների և զավակների՝ ամենամեծերի մարդկանց՝ չափազանց օսուրացած միմյանց նկատմամբ: Նրանց մեջ կա և Բուլոնիայի



17 լեզուներով, դարձել բեսսեկեր Ֆրանսիայում և եվրոպական այլ երկրներում:

յուն, և ցավ, դաժանություն և սեր, որսեղ վախն ու սեղանությունը միասնաբանել են դառնալով ամոզողակալություն սեղանելու ցնցող, սարսափելի և փառախեղ աշխարհ, աշխարհ, որն իր մեջ է ներառում բողոքյան «Չարի ծաղիկներ»-ի թունավոր, անորոշ բույրը: Նուրբ է, զգայագրգիռ, բարկահամ, սազնասպալից, անթույլասրելի, արսավոր ընթերցանություն է նրանց համար, ովքեր հասկանում են... «Միջոցը» պատմվածքների հավաքածուն բարգմանվել է

Այս առավոտ Բախ կամ ժամերգություն լսելու փոխարեն ցանկացա ունկնդրել մեկ այլ՝ թեթև ու գեղեցիկ, ոչ այնքան ռիթմիկ երաժշտություն, բայց չստացվեց... նա փոխեց ձայնապնակը: Ծանրացած մատել է, ծոծրակն առաջ մղել, բերանն օ-ի ման բացել ու օղակներով ծուխ է բաց թողնում: Ուրքը ուրքին գցած՝ առաստաղին է նայում, իսկ ինչ վերաբերում է ինձ, ես՝ նույնիսկ մտադիր էլ չեմ հարցնել, թե որտեղ էր նա մտովի, բաց գույնի զգեստ եմ ընտրում, երգում եմ միջանցքում, պատմություններ եմ պատմում, հետաքրքրվում՝ տեսնես կանձրևի՞ ախոր: Գիտեմ, որ նրան այլևս ոչինչ չի հետաքրքրում այս աշխարհում: Ասում եմ, որ լավ կլինի՞ վաղը շուտ պառնակներ: Կետք է շուտ վեր կենանք, որպեսզի պահարան ընտրենք: Մտապահում է բառերս, անաղմուկ հավանություն տալիս՝ տեղում ետ ու առաջ շարժվելով: Ցանկացա երաժշտության ձայնն իջեցնել, մատը շարժեց. ակնհայտ անհամաձայնության նշան էր: Հազվեցի և իրեն ներկայանալով՝ ակնկալում եմ համապատասխան ժպիտ ու համաձայնություն, մինչդեռ նա քրտնում է, շնչահեղձ լինում, սառը հյուսից մրսում է, վախենում է ինչ-որ բանից, հառաչում, վեր է կենում, վերջապես դուրս ենք գալիս: Պետք է կանգնենք ճանապարհին՝ ծաղիկներ գնելու:

Չորդ արձակուրդները: Մտածեցի չունաստանի մասին. գեղեցիկ տեսարանով, նավահանգստով մի վայր պիտի գտնեի նրա համար, ուր ծովը սփռվելու էր մեր ոտքերի առջև: Եթե ոչ, ապա սար էինք բարձրանալու: Թեև վախենում էի

տեսնում մի գունատ երեխայի, որը դժվարությամբ է առաջ շարժվում: Գլուխս շրջում եմ, ասես ապտակելու էր ինձ: Այլևս չեմ կարողանում տեսնել ցավից տանջվող նրա մարմինը, իսկ երբ դիպչում է ինձ, զգում եմ, որ ինքն իրենից փախչել չի կարողանում: Երբեմն մտածում եմ՝ պատճառը գուցե իմ չափազանց մեղմ, բայց և պարտադրող ներկայությունն է, որ իրեն ստիպում է լսել:

Վաճառասեղանի վրա մի տուփ կարկանդակ է ընտրում, հետո դնում տեղը, ապա կրկին վերցնում, այնուհետ փոքր-ինչ հեռվում գտնելով մեկ ուրիշը՝ գուցե ավելի մեծը, բացում այն, սկսում ուտել միայն այն ժամանակ, երբ մարդիկ դադարում են կատակել: Նյարդայնանում է, ոտքերով գետնին դռվում, չկարողանալով հանդուրժել իր ներկայությանը արվող կատակները, արագ վճարելու փոխարեն: Նա դիտավորյալ մանրադրամը գետնին է գցում, իսկ երբ կռանում է վերցնելու, վայրագորեն բռնում է այն մարդուն, ով իրեն օգնելու էր եկել: Գլուխը նորից խոնարհում է, գալիս է ինձ մոտ՝ կարկանդակների տուփը թեթև ուտեստի նման կրծքին սեղմած: Թափթփված վերնաշապիկով, խոժոռ հոնքերով ու լարված շրթունքներով՝ նայում է մեքենային, մատելով շրխկացնում է փոքրիկ դուռը, աղմուկից ցնցվում, իսկ երբ բանալին գցում է, սկսում է շոշափելով փնտրել, նյարդայնանում է, կորցնում համբերությունը, մթության մեջ որոնում իր մտաբանի, ոտնակների տակ, և երբ փորձում եմ իրեն օգնել, հրաժարվում է՝ ասելով ո՛չ, կարծես վախենալով, որ այլ ինչ-որ մասերի կղիպչեմ: Հառաչում է ու մեքենան տեղից պոկում: Պատասխան չակնկալելով հարցնում եմ.

-Լա՞վ ես:

Մտովի ինքս ինձ խոստովանում եմ, որ ուզում եմ անել դա... -Ես լսում եմ քեզ, - ասում եմ՝ առանց նրան նայելու: Ժպտում է: Նրան չեմ տեսնում, բայց գիտեմ, որ այդպես է: Աչքերը ողողվում են այս առավոտ առաստաղի վրա պատկերված օղակների նման հսկայական, կախ ընկնող արցունքներով:

Ֆրանսերենից բարգմանեց ԼԻԼԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Ս Ա Ս Տ Ի Կ Տ Ե Ղ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

նրա մրսելուց: -Հիվանդ չեմ,- պատասխանեց նա՝ միանգամայն ցածր ձայնով: Երազում էի տան իմ մասնաբաժինն ունենալ, թեև մարդիկ կարող են դեմ լինել դրան: Գիտեմ՝ առավոտյան շատախոսել չի սիրում, նախաճաշից հետո կարող է անփոփոխել իր մեջ ու մինչ երեկո պատուհանի առջև կանգնած սպասել, կամ փոքի վրա ձեռքերը խաչած՝ պառնել: Մուրթն ընկնելուն պես դուրս է գալիս քայլելու: Կարևորն այն չէ, որ երբեմն կորչում է դրսում կամ մնում մտաբանի վրա, այլ՝ հսկայական դաշտավայրերը հատող աչքերը, նավամատույցի եզրին կանգնած մնալը, հոտոտելը: Սիրտը հիվանդ է, հոգին՝ վիրավոր, թեև ասում է, որ լավ է: Նախաճաշի ընթացքում ընկերները փորձում են սրափեցնել նրան՝ ասելով.

-Գնացի՞նք, զբոսնենք, լա՞վ, ասեն ինչ կարգի՞ն է:

Բնականաբար՝ ո՛չ. պարզապես այլ կերպ լինել չի կարող: Սկզբում կարծում էի՝ կանցնի, նրան սիրելն էլ բավական է, բայց նմանօրինակ կենսակերպը շարունակվում է մինչ այսօր ու կարծես վերջ չունի... Պատահում է, որ շունչ առնելուց հետո շփոթվում, շնորհակալություն է հայտնում: Ուստի ստեղծված իրավիճակում ընկերներն ինձ նեցուկ են լինում.

-Չե՞ս կարծում, որ նա ավելի լավ է, դու՛, դու՛ ինչպե՞ս ես:

Իմ պատասխանն ասես որովայնից ելնող աղմուկ լինի, որը բնորոշ է քաղցած մարդուն:

Լցակայանում իջնում է մեքենան լիցքավորելու: Մինչև լիցքավորելը մի պահ սպասում է, ապա

Եթե նա այս րոպեից սկսած անընդ-
հատ արթուն լինե, մե՞նք չունե՞լ կհաս-
նե՞ինք ճշմարտությանը,
որը գուցե մեզ օրջամտանում է իր
լացող հրեժակներով...
Արթուր Ռեմբո, «Անհնարինը»

Ամեն ինչ սկսվեց այն օրվանից, երբ ես
թողեցի աշխատանքս, կտրեցի բոլոր կա-
պերը ծանոթներինս, բարեկամներինս, ըն-
կերներինս հետ ու առանձնացա դա-
տարկ բնակարանում, որտեղ մտադիր
էի մի գիրք գրել, հետո գանգս ցրիվ
տալ:

**Հենց այդ ժամանակ էլ հայտնվեց
ձայնը:**

Անսպասելի և շատ արագ այդ ձայնը
փոխարինեց մնացած բոլոր ձայներին,
որ լռեցրել էի՝ անջատելով հեռախոսն ու
պինդ կողպելով բնակարանի դուռը: Չայ-
նը հագար ու մի ծակուծուկերից անար-
գել ներս թափանցեց՝ գրավելով տան բո-
լոր սենյակները: Ես լարեցի լսողութ-
յունս, գնացի ձայնի հետքերով: Դուրս
եկա պատուհանից, իջա շենքն ի վար,
մոտեցա ցանկապատին, թռա վրայով,
անցա ճյուղերի, տերևների արանքով,
հետո ինչ-որ ժանգոտ քիթեղների, անգ-
լուխ տիկնիկի, կծուտված կոճղի կողքով,
հասա թրթռացող լեզվին, սահեցի ներքև
և հայտնվեցի քարանձավային խորը
մթության մեջ: Չայնը սկսվում էր այնտե-
ղից, հետո թունելի միջնամասում մեծ
թափ հավաքում ու դուրս թռչում՝ պատ-
ռելով օդը կրակոցի ուժգնությամբ՝ հաֆ,
հաֆ... հաֆ, հաֆ, հաֆ... հաֆ, հաֆ, հաֆ,
հաֆ, հաֆ...:

Ես մոտեցա պատուհանին, նայեցի
ներքև ու առաջին անգամ տեսա նրան:
Նա հաչում էր ու սև գույն ուներ: Սև
գույնը հաչում էր ու նրա հաչոցն էլ սև
գույն ուներ...

**Այդ օրվանից հետո ամեն ինչ սև գույն
ստացավ:**

Սև ձայնը հաստատվեց իմ բնակարա-
նում և դարձավ նրա ապօրինի, մենիշ-
խան բնակիչը: Այդքանով չբավարարվե-
լով՝ այն անցավ նաև մաշկիս տակ,
մտավ ոսկորներիս մեջ ու սկսեց ներսից
կրծել ինձ, արյունախում միջատի պես
դանդաղ հալումաշ անել: Դա մնան էր
խսկական աղետի, որ գլխիդ է փլվում
այնքան հանկարծակի, որ հավատող չի
գալիս, թե իսկապես կատարվել է հետո:
Բայց ձայնը կար իրականում և, ինչն է
հետաքրքիր, ես հիշում եմ, այն առաջ էլ
կար ու երևի միշտ եղել է, ուղղակի ես
չէի լսում կամ ուշադրություն չէի դարձ-
նում նրան: Քանի դեռ դուրս էի գալիս
տնից, շփվում էի արտաքին աշխարհի
հետ և լիմում ամենօրյա աղմուկի մեջ՝
ձայնն անցնում էր իմ կողքով ու չէր
մտնում իմ տուն, բայց բավական էր ա-
ռանձնանայի, ամփոփվելի իմ մեջ և
ձայնն, առանց հասպտելու, կապերը թո-
ղած շան պես հարձակվեր վրաս ու մի
հարվածով ոչնչացներ իմ մեծակություն-
ը, մտքերը, զգացմունքները...

Այդպես Աս շուրջ մտավ իմ կյանք:

Շուտով ես կորցրի քունս, թողեցի բոլոր
գործերս և ամբողջ օրվա ընթացքում
միայն մի զբաղմունք ունեի՝ սպասել, թե
երբ պիտի շան ձայնը կտրվի, իսկ երբ
կտրվում էր, սպասել՝ երբ պիտի նորից
սկսվի: Անհմաստ սպասումների մի
շղթա, որի վերջը չէր երևում, իսկ սկիզբը
կորցրել էր ժամանակի թելն ու անվերջ
շարունակվում էր: Ինչ ասես որ չէի
մտցնում ականջներինս մեջ՝ էլ բանքակ,
էլ պլաստիլին, էլ հացի խմոր, ականջա-
կալներ էի դնում, գլուխս բարձի տակ էի
խոթում, դուռ - պատուհան փակած
մտնում էի լուգարան, ջուրը միացնում,
խշշոցի տակ երգում էի, պարում, գոռո-
ռում... անօգուտ էր: Կարճ ժամանակում
ձայնը կրկին հասնում էր ինձ ու թու-

նավոր օձի պես սկսում խայթել բոլոր
կողմերից: Ես ամբողջ հոգով ատում էի
այդ շանը, ատում էի նրա փրչոտ մար-
մինը, սուր ականջները, աղեղնաձև պոչը,
քառասուններկու ատամները հատ-հատ,
ատում էի նրա վարդագույն լեզուն, սև կո-
ճակների պես փայլվող նրա աչքերը, որ
երբեք ինձ չէին նայում... Բայց հատկա-
պես ատում էի շան տերերին: Նույնիսկ
նամակներ էի գրում, դրոնք երբեք չէի ու-
ղարկում, երևի լրիվ չէի ցնդել դրա հա-
մար: Չնայած, հիմա մտածում եմ՝ եթե
ուղարկեի, միգուցե ամեն ինչ ավելի
լավ ավարտ ունենար... Չգիտեմ:

«Բարև...

Մենք ծանոթ չենք: Ես դիմացի չենքքում
եմ ապրում, մտավորական մարդ եմ, ու-

Տիգրան Կիրակոսյան

ՍԵՎ ՇՈՒՆԸ

գում եմ մի գիրք գրել, իմիջիայնոց՝ շատ
կարևոր, որից կախված է ամբողջ մարդ-
կության ճակատագիրը: Այդ գրքից հետո
կյանքը փոխվելու է դառնա իսկական
դրախտ (ես կատակ չեմ անում), ուղղա-
կի մի պրոբլեմ կա, մի փոքր խնդիր՝ դու
ինձ չես թողնում գրել, անընդհատ խան-
գարում ես քո հաչոցներով: Կներես, եթե
խնդրանքս մի քիչ կոպիտ հնչի, բայց կլի-
նի՞ էլ չհաչաս, էլ ձայն չհանես, հը՞ն...
Կամ, եթե չես կարող բողբոլիմ լռել՝ գո-
նե քիչ հաչաս, ծայրահեղ անհրաժեշ-
տության դեպքում: Հասկանո՞ւ ես, երբ
ես բարձր ձայն եմ լսում, միանգամից
շեղվում եմ, ոչ գրել է ստացվում, ոչ՝
կարդալ, ուշադրությունս ցրվում է, ու ես
ապուշանում եմ, դառնում անպետք մսի
կտոր... Հասկանում եմ, որ հաչալը թեզ
համար բնական անհրաժեշտություն է,
էդպես դու լիցքաթափվում ես, ցրվում,
թեթևանում, բայց մի քիչ էլ ի՞նչ մասին
մտածի, մե՞նակ դու չես, չէ՞: Մանավանդ
որ կարող ես լռել, մի քիչ ջանք պիտի
գործադրես, էլի: Հետո դու հո եմ տա-
փակ, ճղճղան շներից չես, որ օրուգիշեր
բերանները չի փակվում, դու խելացի՞,
զարգացած շուն ես, տեսնում եմ, դրա
համար էլ հետո խոսում եմ, ոնց որ հա-
վասարը հավասարի ու վտահ եմ, որ
մենք իրար ճիշտ կհասկանանք... Դե,
կարծում եմ պայմանավորվեցինք: Նա-
խապես շնորհակալ եմ: Լավ մնա»:

«Ես, ախր, խնդրեցի քեզ, խնդրեցի,
չէ՞: Ինչի՞ ես դու էլի հաչում: Ես, ախր,
մարդկային լեզվով քեզ բացատրեցի, որ
խանգարում ես ինձ, որ ես կարևոր գոր-
ծով եմ զբաղված: Դժվար է՞ր էդքանը
հասկանալ, մեծ բան է՞ր... Չեմ հասկա-
նում՝ քո տերերը ինչ ձևի մարդիկ են:
Լավ, նրանց հեջ պետքը չեն քո հաչոցնե-
րը: Չլինի՞ նրանց ուղեղը հատուկ ձայ-
նադիմացկուն նյութից է պատրաստված,
իսկ նյարդալարեր ընդհանրապես չու-
նեն: Նրանք, ինչ է, ամբողջ օրվա ընթաց-
քում, ոչ մի անգամ չեն մտածո՞ւմ, գիրք
չեն կարդո՞ւմ, երաժշտություն չեն
լսո՞ւմ, ֆիլմ չեն նայո՞ւմ, չեն երագո՞ւմ,
միտք ու հոգի չունե՞ն, մե՞նակ օրգան, օր-
գան - համակարգեր ե՞ն, ինչի՞ քո հաչոց-
ները չեն նյարդայնացնում էդ ապուշնե-
րին, ոչխարներին, էդ... Լավ, լավ, հան-
գիստ, հասկացա, հանգիստ, ես վատ
բան չէի ուզում ասել տերերիդ մասին,
լավ: Ենթադրենք, թե էդքանով հանդերձ
նրանք նաև լավ մարդիկ են՝ ազնիվ են,
աշխատասեր, բարի, շատերին են լա-
վություն արել: Ենթադրենք, թե էդպես է:

Բայց ինձ ինչ կասե՞ս իմանամ, ինձ ինչ
օգուտ նրանց լավ մարդ լինելուց: Դրա
տեղը ես կնախնորքեի, որ նրանք ան-
բան, ժլատ, չար մարդիկ լինեն, բայց մի
քիչ նուրբ հոգի ունենային, զգայուն
սիրտ, գրքեր կարդային, բանաստեղ-
ծություններ գրեին ու չպահեին քո պես
անհիքնասեր, աննպատակ հաչացող
շուն...»

«Ախ, ինչի՞ ես դու էդքան հաչում, այ
անասո՞ւն: Դու դիտավորյալ ե՞ս անում:
Կարող ա՞ դու ցնդել ես: Ի՞նչ և քո հետ
կատարվում, ասա հըըր տեսնեմ: Քեզ
լավ չեն կերակրո՞ւմ: Սոված ե՞ն պա-
հում: Քիչ ե՞ն հետո խաղում: Չեն տա-
նո՞ւմ ման տալու: Էզ չեն բերո՞ւմ մոտո՞...
Ի՞նչ և ուզածդ, այ անհորմալ: Նյար-

դերս արդեն լրիվ քայքայել ես: Գիտե՞ս,
որ գիշերները չեմ քնում, հաց չեմ ուտում,
սրտի ծակոցներ ունեմ... Տերերդ ի՞նչ են
մտածում դրա մասին, դու՞ ինչ ես մտա-
ծում, էս շներերի բնակիչներն ինչ են
մտածում: Ինչ և, նրանց էլ չեն խանգա-
րո՞ւմ քո հաչոցները, նրա՞նք էլ են քո տե-
րերի պես հաստազուլիս, բթամիտ արա-
րածներ... ձե՛ն... կամ, միգուցե, իմ պես
հանդուրժող եմ... Բայց չէ, այ ախպեր, է,
ի՞նչ հանդուրժող, հրես, բոլորի պատու-
հաններն էլ լայն բացված են, քո ձայնն
ընդհանրապես չի խանգարում, որ իրենց
բներում զբաղվեն առօրյա հոգսերով,
մեկ-մեկ էլ կախվեն պատուհաններից
մաքուր օդ շնչելու՝ որը կրծքերը դուրս
զցած, որը լեզուն դուրս գցած, որը՝ ոտքե-
րը, ձեռքերը, փորը, քամակը... Մրանցից
ոչ մեկն էլ չի նկատում քեզ, շու՞ն, շան
տեղ չի դնում, բոլորը քթած ունեն քո
վրա էլ, քո հաչոցների վրա էլ. էս շեն-
քաբնակ ամբոխի մեջ մե՞նակ ե՞ս եմ քեզ
լսում, ե՞ս եմ տեսնում՝ ոնց ես շղթադ
կրծում, գլխով պատին խփում, շրջազ-
գեստների տակից նայում, տիկնիկներ
բզկտում, քթիդ տակ գոմոռում, մոմոռում...
Լավ, ի՞նչ ես դու դրանով ուզում ասած լի-
նել, գորդի տարած, ինչի՞ ես կյանքս ու-
տում, ինչի՞ ես ձեռք գլուխդ գցել, հան-
գիստ վեր ընկի տեղդ, էլի... Չենդ կտրի,
ասում եմ... ձեռք կտրիիիիիիիիիիիիիի-
իիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի...

Մի քանի շաբաթ նյարդային խանգա-
րումների մեջ անց կացնելուց հետո որո-
շեցի գործնական քայլերի դիմել: Միտք
հղացա. փողոցից տուպակով մանր քա-
րեր հավաքեցի ու բերեցի դրեցի պատու-
հանագոգին՝ մարտի պատրաստ վիճա-
կում: Երբ շունը հաչա, ես քար կշարտեմ
նրա կողմը, շունը կվախենա, կլի: Այդ-
պես հաճախակի նրան վախեցնելով՝ ես
աստճանաբար կազդեմ շան ռեֆլեկտոր
համակարգի վրա, մինչև բերանը վերջ-
նականապես կփակվի ու էլ չի հաչա:

Մտահղացումն արտաքուստ շատ
պարզ էր ու տրամաբանական. ցնծութ-
յան մեջ էի. բայց երբ բանը հասավ գոր-
ծին, պարզվեց, որ դա այնքան էլ հեշտ
չէր: Շունն ավելի խելացի գտնվեց, քան
ես կարծում էի, նա կռահեց մտադրութ-
յունս: Երբ քարը վերցնում էի, որ
շարտեմ, տեղնուտեղը ձայնը կտրում էր:
Նույն պահին ձեռքս քարի հետ կախ-
վում էր օդում ու անգոր իջնում ցած: Ես
չէի կարող քար նետել լռության վրա:
Շունն ասես բնազդաբար զգում էր այդ
հոգեբանական նրբությունը և չարաչա-

հում իմ նվիրական զգացումները: Քարը
դնում էի տուպակի մեջ ու վերադառնում
սենյակ, բայց դուռը հետևիցս փակում էի
թե չէ, շունը կրկին հաչում էր. ես նորից
վազում էի պատուհանի մոտ ու դեռ քարը
չվերցրած, նորից լռություն էր տիրում.
Իսկ երբ հետ էի դառնում, հաչոցները
վերսկսվում էին: Այսպես օրվա ընթաց-
քում շատ անգամներ և ամեն անգամ
շունն առաջ էր անցնում ինձնից, միշտ
հաղթող դուրս գալիս՝ սեփական գերա-
կայության մի տեսակ ծաղրական, նույ-
նիսկ, նվաստացուցիչ զգացումով:

**Համբերությանս քաժակը գնալով
լցվում էր:**

Շանը վախեցնելու բազմաթիվ անհա-
ջող փորձերից հետո՝ մի անգամ էլ վերց-
րի քարն ու մնացի վարագույրների
հետևում կանգնած: Որոշել էի այնքան
սպասել, մինչև հաչա: Մի ժամ սպասեցի.
ձայն չկար: Առանց իմ կողմը նայելու էլ
ամեն ինչ տեսնում էր, ականջների ծայ-
րով կարողում իմ ամեն քայլը, ամեն միտ-
քը: Մենք իրար հսկող թշնամիներ էինք,
իրարից զգուշացող, իրար դեմ դավեր
նյութող և դա նրան դուր էր գալիս: Այդ
շանը դուր էր գալիս, որ ես զբաղվում եմ
իրենով, որ օր ու գիշեր միայն իրեն եմ
լսում, իր մասին մտածում և նա ամեն ինչ
անում էր, որ ես չկորցնեմ իր հանդեպ հե-
տաքրքրությունս, միշտ խաղամ հետը:
Նրա համար դա ընդամենը խաղ էր, սո-
վորական, անվնաս խաղ, մինչդեռ ինձ
համար՝ կյանքի ու մահվան խնդիր:
Բայց դա էլ նրան քաջ հայտնի էր:

Սև շունն ամեն ինչ գիտեր իմ մասին:

...մի ժամ հետո հաչաց: Ես թափով
շարտեցի քարն ու հետ քաշվեցի: Քարը
շրխկոցով կպավ գետնին, շունը լռեց,
կարճ ժամանակով, բայց լռեց: Հիշում
եմ՝ ինչքան էի ուրախացել, որ ինձ վեր-
ջապես հաջողվեց խորամանկել շանը,
կտրել նրա համառությունն ու շրջան-
ցել: Եվ միայն հիմա եմ հասկանում՝ ին-
չու նա արեց դա, ինչու հաչաց մի ժամ հե-
տո: Շունը հաչաց ոչ այն պատճառով,
որ համբերությունը չհերիքեց, կորցրեց
զգոնությունը կամ մոռացավ իմ մասին,
չէ, նա հաչաց, որովհետև խղճաց,
խղճաց էդ տխմար, հարիֆ, էշ մարդուն,
որ քարը ձեռքին վարագույրի հետևում
կանգնած մի ժամ սպասում է, թե երբ
պիտի ինչ-որ մի շուն ներբևում հաչա:
Իսկ ես ուրախացել էի:

Սև շունը խղճաց ինձ:

Դրանից հետո նա ավելի շուտ էր հա-
չում ու ավելի քիչ պահում ինձ վարա-
գույրների հետևում: Կամաց-կամաց
կրճատեց սպասումներս՝ դարձնելով
քառասուն րոպե, հետո՝ կես ժամ, հետո՝
քսան րոպե, տաս րոպե, հինգ րոպե, հե-
տո նորից տաս րոպե... այդպես շարու-
նակ: Նույն պատմությունը շարունակ-
վում էր փոքր-ինչ վերափոխված սցենա-
րով: Ես քարեր էի շարտում, շունը մի
քիչ լռում էր, հետո նորից հաչում ու շատ
համբերատար, շատ հանգիստ ազդում
իմ ռեֆլեկտոր համակարգի վրա, մատ-
ների վրա պարագնում ինձ...:

**Սև շունն ինձնից խաղալիք էր սար-
քում:**

«Մու՛ս: Չասե՛ս: Հասկացա...Ես հաս-
կացա՝ ինչի էս դու հաչում, դժոխքի՞
ծնունդ: Դու մե՞նակ ես մնացել ու կա-
տաղել ես: Դու կատաղությունից ես, չէ՞,
հաչում: Ես մերկացրի քեզ, խեղկատակ,
տեսա՞ր ոնց մերկացրի: Իսկ ուզում ե՞ս՝
ասես ինչի ես կատաղել, ուզում ե՞ս:
Դե լսի՛»:

Դու կատաղել ես, որովհետև չես կա-
րող պոկ գալ քո էդ գարշահոտ տնակից,
չես կարող պոկել շղթաներդ, փախչել
զնալ ուրիշ երկիր, ուրիշ աշխարհ...:

Դու տերերիդ քթամտության վրա ես
կատաղել, որ լափելուց ու քնելուց բացի

«««««««« 6

ուրիշ ոչ մի բանի ընդունակ չեն ու նույնը պահանջում են քեզնից:

Դու՛, ցնդածի՛ մեկը, կատաղել ես նրանից, որ մահը քո դեպքում անհրաժեշտություն է, ամեն դեպքում՝ անխուսափելի, բայց ընդհանուր հաշվով՝ անհնար:

Դու կատաղել ես նրանից, որ ամեն օր նույն բառերն են լսում. «Ինչի՞ տուն չես գալիս, ու՞ր ես կորել: Դե, տեսնենք ինչքան կղիմանաս: Մեկ ա վերջում էլի սոված շան պես գալու ես հաց ուտես»:

Դու կատաղել ես ժամանակի անբուժելի ախտից, աղջիկների սեռագրգիտ տեսքից, տղաների սեռական ազդեցության, ծերերի սեռական անզորությունից, նորածինների սեռական անտեղյակությունից ու ամեն ինչի սեռական դաստիարակությունից:

Դու կատաղել ես, որ հիմա ընթերցողներ չկան ու դու ոչ մեկի հետ չես կարող ծակ-ծակ փոխադասել կյանքի, արվեստի ու հավերժության խնդիրների շուրջ...

Ես կատաղել եմ, դու կատաղել ես նաև նրանից, որ քո մաթեմատիկայի ուսուցչուհին երկար տարիներ հետո ամուսնացել է հաջողակ տղամարդու հետ ու մոռացել քո մասին, էլ չի հիշում քեզ...

Դու կատաղել ես, որ էդպես էլ չտեսար Ռեմբրանդտի ու Մուրբարանի բնօրինակները, չեղար ոչ Պրադոյում, ոչ՝ Դրեզդենում... Դու կատաղել ես, որ էդպես էլ չգտար քեզ կյանքում.

որ բանաստեղծություններ գրելու փոխարեն բուրդ ես չփխում

որ նկարելու փոխարեն հարուստների տներն ես ձևավորում

որ վեպ գրելու փոխարեն որոշել ես ինքնասպան լինել

որ ինքնասպան լինելու փոխարեն որոշել ես գրող դառնալ

որ ֆիլմեր անելու փոխարեն գովազդային հոլովակներ ես անում

որ թավջութակի կոնցերտ գրելու փոխարեն կաֆեներում դաշնամուր ես ձնզնզացնում...

Ես հասկացա քեզ, շու՛ն, դու կատաղել ես քո երկրում տիրող վիճակից՝ համատարած կաշառակերությունից, թալանից, ստից, կեղծիքից, կատաղել ես հարուստների շանոթիությունից, աղքատների շնային կյանքից, Շան սրտի անճարակությունից, շնացողների մակերեսայնությունից, թափառական շների ամենօրյա գնդակահարություններից... Վերջապես կատաղել ես նրանից, որ ամեն օր, առավոտից իրիկուն անիմաստ հաչում ես, կոկորդ պատռում ու չնայած հաչոցներով ոչինչ չես կարող փոխել, միևնույն է, պիտի հաչաս, անընդհատ պիտի հաչաս, մի՛շտ պիտի հաչաս, որովհետև շուն ես, քոտտ շուն ու միայն դրան ես ընդունակ »:

«Լավ: Հասկացանք: Ասենք թե կատաղել ես: Բա ես ինչ մեղք ունեմ, հը՞ն: Ե՛ս ինչ վատություն եմ քեզ արել, որ ինձնից ես մտող հանում: Քո կարծիքով ե՞ս պիտի ամեն ինչ համար պատասխան տամ... Դե ուրեմն ուշադիր ինձ լսի, շուն, ես ոչ մի կապ չունեմ դրանց հետ, ես թքած ունեմ էդ բոզանոցի, էդ աղբանոցի, էդ ստրուկների հասարակության վրա, նրանց կենցաղի, նրանց քաղաքների, նրանց ստեղծած աշխարհի վրա, էդ ամեն ինչը վաղուց արդեն ստեղծ ա հասել ու էլ ինձ չի քունում, լսում ե՞ս: Ես հագիվ գտել էի իմ փրկվելու ձևը, ձեռներս լվացել էի էդ աղբից, սենյակում փակվել, ուզում էի գիրք գրել, որ հետո վերջս տամ պրծնեմ: Բայց չգիտես որ գրողի ծոցից հայտնվեցիր դու ու հաչոցներով սկսեցիր ամեն վայրկյան հիշեցնել ինձ, որ իմ

սենյակներից դուրս ուրիշ աշխարհ էլ կա, որտեղ դու խեղդվում ես, որից դու կատաղում ես ու ինձ էլ քո հետ կատաղացնում... Բայց ես քո վրա էլ թքած ունեմ, շու՛ն, ես գործ չունեմ հետդ, գնա ուրիշի հետ դարդերդ կիսի: Ես հանգիստ եմ ուզում, տարրական հանգիստ, չես հասկանու՞մ, այ բողի՛ լակոտ »:

«Լսի, շու՛ն, ես, ես իսկականից չգիտեմ... չգիտեմ ո՞նց քեզ օգնեմ, անկեղծ, չգիտեմ ինչ անեմ քեզ համար: Ես ի վիճակի չեմ ինչ-որ բան անել կամ փոխել: Ես է՛ն անգամ խաբեցի քեզ, որ գրքիցս հետո կյանքը դրախտ է դառնալու, խաբեցի, որ ձայնդ կտրես. դու գլխի ընկար ու էլի շարունակեցիր հաչալը: Բայց, կատակը մի կողմ, շուն, ես իսկապես չեմ կարող աշխարհը փոխել ու դարձնել քո սրտով, էնպես որ էլ հաչալու առիթ չունենաս: Ինձ համար ավելի հեշտ կլինի քեզ սպանել, քան աշխարհը փոխել: Հասկանում ե՞ս՝ ինչ եմ ասում: Բացի դրանից, աշխարհը փոխելուց հետո (եթե նույնիսկ դա հնարավոր լիներ) ոչ մի կերպ չես երաշխավորի, որ քո փոխարեն չի հայտնվի մի ուրիշ շուն ու չի սկսի հաչալ արդեն էդ փոխված, բարեկարգված աշխարհի վրա: Բոլոր շներին չես գոհացնի: Դրա համար ես չեմ էլ ուզում, որ աշխարհը փոխվի, անօգուտ է, ավելի շուտ ուզում եմ, որ այն ընդհանրապես վերանա, մեկընդմիջ չքվի պատմությունից, էնպես որ հետքն էլ չմնա: Էդպես ավելի երաշխավորված կլինի, ավելի ճիշտ ու նպատակային: Ու գիտե՞ս ինչ... ես ինքս կոչնչացնեմ աշխարհը: Հա: Ու կսկսեմ դա անել հենց քեզնից: Ես կստիպեմ քեզ լռել, տակա՛նք կենդանի: Երբ ձայնդ չլինի, դու էլ չես լինի. երբ դու չլինես, քո տնակն էլ չի լինի, քո տերերն էլ չեն լինի, կողքի շենքերն էլ՝ իրենց բնակիչներով, չեն լինի ու մնացած աշխարհն էլ չի լինի: Ոչ մի գիրքի չի լինի: Պետք է ուղղակի ռեխդ փակել, էդքան բան »:

Ես գործի էի դնում ամբողջ երևակայությունս՝ պատկերացնելով, թե ինչպես եմ հաշվեհարդար տեսնում շան հետ: Դիպուկահարով կրակում էի գլխին, դանակով կտրում լեզուն, ձկան թելով կախում էի ծառից, բերանին պահպանակ քաշում, ասեղներով նրբերշիկ էի տալիս, վառում բենզինով, խեղդում ջրի մեջ, մետաղ կամրջից ու էլ ինչ սաես հետը չէի անում, բայց այդ տեսարաններից ոչ մեկն ինձ չէր քաղաքարում ու հանգստություն չէր տալիս, որովհետև բոլորն էլ կատարվում էին միայն իմ մտքում, երևակայության մեջ, իսկ իրականում շունը էլի հաչում էր ու հաչում, իսկ ես՝ էլի նամակներ գրում. «Ես գիտեմ, ես լսում եմ, ես տեսնում եմ, ես հասկանում եմ... Ես գիտեմ, ես տեսնում եմ, դու լսում ես, ես հասկանում եմ... Ես գիտեմ, մենք գիտենք, ես լսում եմ, դու հաչում ես... Ես հասկանում եմ, դու տեսնում ես, ես տեսնում եմ, մենք տեսնում ենք... Դու լսում ես, ես լսում եմ, դու հաչում ես, ես հաչում եմ... Մենք գիտենք, տեսնում ենք, մենք լսում ենք, հասկա-

նում ենք... Մենք հաչում ենք, հասկանում ենք, հաչում ենք, հասկանում ենք...»

Մի օր էլ, երբ, հուսահատության եզրին հասած, ցուցամատերը ակննջներիս մեջ, արդեն պատրաստվում էի նետվել պատուհանից, աչքովս ընկավ լուսամուտագոգին մնացած քարերով լի տուպակը. « Իսկ ի՞նչ կլինի, եթե վերցնեմ ու իսկականից խփեմ շանը: Նշան բռնեմ ու խփեմ...»

Մի շաբաթ շարունակ այս միտքը ծա-



Տիգրան Կիրակոսյան

ՍԵՎ ՇՈՒՆԸ

կող փետուրի պես թափառում էր գլխումս: Անքան էի տարվել դրանով, որ նույնիսկ շան հաչոցները մոռացա: Միտքն ամբողջովին պարուրել էր ուղեղս, կրկնակոխ հետապնդում, ոչ մի վայրկյան հանգիստ չէր տալիս, մինչև վերջապես որոշեցի ի կատար ածել այն: Յերեկվա մեռած մի ժամի, երբ բոլորը գլուխները հետ էին քաշել պատուհաններից, վերցրեցի տուպակից ամենամեծ ու ամենազեղեցիկ քարը և մի կողմ քաշելով վարագույրը, առաջին անգամ նշան բռնեցի շան վրա: Հաստատ որոշել էի խփել, բայց ոչ շատ ուժեղ, էնքան որ մի քիչ վախեցնեմ, խուտուտ տամ, որ իմանա, թե ով է մեզնից դրության տերը:

Այդ պահին շունը, բնից քիչ հեռու, ճաքճաք, շարքից դուրս եկած գլոբոս էր կծոտում: Երբ բարձրացրի ձեռքս, նա թողեց այն ու գլուխը դանդաղ իմ կողմը թեքելով՝ նայեց ուղիղ աչքերիս մեջ: Առաջին անգամ մեր հայացքները հանդիպեցին:

Դա եղավ մեր միակ հանդիպումը:

Նրա թափահարվող պոչից ինձ թվաց՝ չի հասկացել դրության լրջությունն ու երևի մտածում է՝ էլի առաջվա խաղերն ենք խաղում: Բայց աչքերի մեջ մի տեսակ տխրություն կար, անվստահության պես մի բան: Իմ լարված դիրքից երևի ինչ-որ բան էր կռահել:

Մի րոպեի չափ ուշադիր նայում էինք իրար, նա՛՛ ներքևից, ես՛՛ վերևից: Հույս չունեի, որ կհաչա, մանավանդ այդ պահին, երբ քարը ձեռքիս բացահայտ դրան էի սպասում: Բայց ինչ-որ բան պահում էր ինձ, չէր թողնում, որ գնամ: Շունչս պահած սպասում էի ու, մի րոպե չանցած, շունը հաչաց, ուղիղ դեմքիս: Կտրուկ ձայնը տարածվեց վերև ու, արձագանքի հետ միախառնված, հսկա ալիքով փշրվեց շենքերի պատերին: Ես ամբողջ ուժով շարժեցի քարը. տեսա, որ ընթացավ ճիշտ ուղղությամբ: Չարմացրեց այն, որ շունը չփախավ, խույս չտվեց

քարից, թեև կարող էր. տարածությունը դա թույլ էր տալիս: Անշարժ, նույն տեղում, կանգնած մի տեսակ զարմանքով հետևում էր իր վրա սլացող քարին, ասես չէր հավատում, որ ես դա արեցի: Նայում էր ու չէր հավատում: Չէր հավատում, բայց սպասում էր...

Սև շունը սպասում էր այդ քարին:

Ես հետ քաշվեցի ու չտեսա՝ ինչպես քարը տեղ հասավ, բայց թիկունքումս լսեցի մի ձայն, որ երբեք չեմ մոռանա. զսպված ոռնոց էր, աղեկտուր հեծեծանք, ամնարդկային հառաչ, որ մեկ էլ երևի մահացու վիրավոր մարդու շուրթերից դուրս կգար: Հասկացա, որ քարը դիպել է շանը ու, թեթևացած շունչ քաշելով, առանց շրջվելու, վերադարձա սենյակ՝ իմ գործերին:

Այդ օրը ամեն ինչ ստացվեց. կատարյալ լուրջությամբ էր բնակարանում: Ավարտեցի կիսատ թողած վեպի ընթերցումը, վերանորոգեցի ջարդված աթոռը, մի քանի պարբերություն գրեցի գրքիս համար ու քննեցի մեռածի քնով:

Գիշերը տարօրինակ երազներ տեսա: Իբր՝ մեծ-մեծանակ թափառում եմ դատարկ քաղաքում, տուն եմ շտապում, բայց մոռացել եմ ճամփան ու մոլորված անընդհատ անցնում եմ նույն տեղերով: Անպատեղի՝ կրկնվող փողոցներից մեկի հենց կենտրոնում բախվում եմ մութ, երկարավուն փոսի, ասես հատուկ անմարդաբնակ քաղաքի միակ դիակի համար փորված: Անկախ ինձնից մոտենում եմ, նայում խորքը. ոչինչ չի երևում: Հանկարծ թիկունքումս արագ շնչառության ձայն եմ լսում, մանր քայլերի թփփոց: Տազնապը հաղթահարելով՝ որոշում եմ շրջվել, բայց կորցնում եմ հավասարակշռությունս, ընկնում փոսը: Հետո, իբր, բարձրանում եմ շենքի աստիճաններով. հարկը կորցրած, ոչ մի կերպ չեմ գտնում բնակարանիս տեղը: Հերթով բախում եմ դռները, որոնք իրենք-իրենց բացվում են, բայց ներսում մարդ չկա, դատարկություն է: Երկար որոնումներից հետո վերջապես գտնում եմ դուռը, բացում բանալիով, մտնում եմ ներս ու, սենյակի հենց կենտրոնում, կիսախավարի մեջ տեսնում ինձ, շղթայով առաստաղից կախված, գլխիս՝ պահպանակ, սրտիս մեջ՝ դանակ, իսկ ոտքերիս տակ ինչ - որ մութ ստվեր է դառը սվավացնում: Այդ պահին ուժեղ շրիկոց է լսվում: Բացում եմ աչքերս. պատուհանն է բացվել: Դատարկ փեղկը ճռռում է սառը քամուց, իսկ ապակու կտորները սփռվել են հատակով մեկ ու ամեն փշուրի վրա մի լուսին կա: Վեր եմ կենում անկողնուց, լուսինների վրայով գնում փեղկը ծածկելու: Անցնում եմ հայելու կողքով, բայց դեռ պատուհանին չհասած, կրկին հետ դառնում: Նայում եմ հայելու մեջ: Ես չկամ: Իմնացս, ճիշտ իմ տեղում, կանգնել է **Սև շունը:** Գլխով է անում ինձ: Նրա աննկատ շարժումից հայելին փշրվում, թափվում է ոտքերիս տակ...

Երբ արթնացա, արդեն կեսօր էր: Արևի շողերը հասել էին պատի ճաքերին ու շեղանկյուն կիսել սենյակը: Երկար էի քնել: Անսովոր, տարօրինակ զգացողություն էր՝ լուրջության մեջ արթնանալ: Տեսնես ինչի՞ց կլինի: Ականջ եմ դնում: Չայն չկա: «Ոչինչ, հիմա նորից կսկսվի, քնած է երևի», - մտածում եմ ու նույն պահին հիշում նախորդ օրվա իրադարձությունները՝ քարի սլանալը, տխուր հայացքը...- ձայնը: Շտապ վեր եմ թռչում անկողնուց, առանց հագնվելու վազում պատուհանների մոտ: Նայում եմ ներքև՝ բակի կողմը: Տնակը տեղում է, շղթան՝ գետնին ընկած, շունը չկա...

Ես սպանել էի Սև շանը:

Ու լուրն ընկավ գյուղի բերանը, թե Ստեփանը կնոջը դուրս է արել, սա էլ դուրս է եկել տանից ու գնացել անհայտ ուղղությամբ: Դե, այնքան էլ անհայտ չէ՝ առավոտյան, գյուղամիջում, իբր հենց էնպես, իմիջիպալոց, Սահակը պատմեց, թե գիշերը դուրս է եկել մաքուր օդ շնչելու ու տեսել

րենց կողքի տունը գնար. հին հարևանություն է, Ստեփանն աշխատող տղա է, իր հոր աչքի լուսը: Չէր էլ պատկերացնի, որ սկեսուրը առաջին իսկ օրից իրեն պաշտոնը բարձրացրած չինովնիկի պես կպահի: Առաջին օրը, լույսը չբացված, մտավ ջահելների սենյակն ու սկսեց, իբր, անկո-

են, խոսել, բայց անհեր, անմեր տղա էր Մուրադը, նրան աղջիկ չէին տա, մանավանդ որ՝ Ստեփանի թեկնածությունն անցել էր միաձայն: Ամուսնանալուց հետո էլ մի անգամ փորձել էր հետը խոսի, բայց Արուսիկը չէր թողել, ասել էր՝

-Ամոթ է, Մուրադ... մեղք է... փորձանք կդառնա... էլ



Անի Մաղաֆյան

ՇՈՐԸ

է՝ ծաղկավոր շորով մի խիզան մտնում է իր հարևան Մուրադի տուն: Նախորդ առավոտյան Ստեփանը կնոջը մի քանի բան է կարգադրում ու դուրս է գալիս: Երեկոյան վերադառնալով տեսնում է, որ բոստանը ջրած չէ, հավերի թառը բաց է, կինն էլ հոր տնից օժիտ բերած կարի մեքենայի առաջ՝ ծաղկավոր չից շոր է կարում: Կռիվն ընկնում է սրանց մեջ, թե գործերը թողած ինչով է զբաղվում: Կնոջը կարգադրում է բոլոր գործերն անել էնպես, որ մեկ էլ ինքը գա ու տեսնի՝ էլ անելու բան չի մնացել: Արուսիկը շատ կուզեր եղպես անել, բայց շորն ավարտելուն քիչ էր մնացել, որոշեց վերջացնի, հագնի ու եղպես դիմավորի ամուսնուն:

դինը հավաքել, երկրորդ օրը հարսի պարտականությունների մի բանավոր ցուցակ ներկայացրեց, մեկ օր անց սկսեց դաստիարակել ու եղպես մինչ օրս: Օր չկար, որ երեսով շտաբ երեխա չունենալը: Ստեփանն էլ առավոտյան դուրս էր գալիս, երեկոյան վերադառնում: Չխոսկան տղա էր: Վեց տարվա ընթացքում ամբողջ ասածից միայն մի բան էր պավորվել Արուսիկի մեջ՝ իրեն տուն բերելու առաջին օրը ասաց՝ մորս համար լավ հարս եղնես՝ ամեն ինչ լավ կեղնի: Բայց էլ միջոց, ձև ու տարբերակ չէր մնացել լավ հարս լինելու:

Ուզածը մի ծաղկավոր շոր էր, եղածը մեծ բան չէր: Ստեփանն եկավ տուն, տեսավ կնոջն ու չճանաչեց: Չիզ մարմնով, մազերը բարձր հավաքել էր, աչքերի եզրերը սև մատիտով գծել, շրթունքները կարմիր ներկել ու կանգնել էր սենյակի կենտրոնում: Մի քանի վայրկյան մարդն եղպես կանգնած մնաց ու չհասկացավ՝ Արուսիկի շատ սիրուն լինելուց էր, թե անսպասելիությունից՝ ապտակեց կնոջն ու կատաղած նստեց սեղանի մոտ: Էլ չէր նայում դռան կողքին կուչ եկած կնոջը: Փնչացնում էր քթի տակ՝ էգին իր ձեռքից կորցրած ցլի մնամ: Անտեր շորն էլ էնքան է սազում տերն օրինածից, որ աչք կտրել չի լինում: Լավ էր, երբ Արուսիկն անշուք, միշտ նույն՝ ձևն ու գույնը կորցրած զգեստով էր, մազերը շալի տակ պահած, աչքերը կախ: Հիմա էլ առաջվանը չի լինի: Էսպես դուրս կգա գյուղամեջ, կնայեն աջուձախից, դե Ստեփան, դու էլ արի՛ տեր էդի քո բարիքին, որ ուրիշի չտես աչքը չբաղդրանա վրան: Ստեփանը չէր էլ պատկերացնում, որ առանց զարդարանքների էլ արդեն կար մեկը, ում աչքը բաղդր էր իր կնոջ վրա: Մուրադի սիրտը վաղուց էր Արուսիկին կպած: Դեռ ջահել ժամանակ էլ՝ մի անգամ բաղերում ժամադրվել

չգաս...

Ու Մուրադն էլ չէր եկել: Ջահել օրերի սերը խորը թաղել էին երկունս էլ:

Սկեսուրը եկավ, նստեց տղայի կողքին ու գլուխն առավ ձեռքերի մեջ: Մարդը մահանա բռնեց, թե կնիկը հենց էնպես թագա շոր չի ուզի, ուրեմն մի բան կա: Բերեց հասցրեց կասկածը Մուրադի վրա, թե արդեն մի շաբաթ է՝ ինքը տեսնում է, որ Մուրադը իրենց պատի կողքով շատ է դես ու դեն գնում:

-Ինչի՞ Մուրադը մեր պատի տակից չի հեռանում,- ասում էր, բռունցքը խփում սեղանին, խփում էր ու աչքերը չռում ծաղկավոր շորը հագնի դռան տակ կուչ եկած կնոջը,- Մուրադի համա՞ր ես հագել-կապել,- ասում էր ու ինքն իր ասածից կարմրում-վառվում: Նայում էր քանդված մազերի արանքից իրեն վախեցած նայող աչքերին, հայացքն իջեցնում էր մարմինն ընդգրկող զգեստին ու աչքերը կտրուկ թեքում: Սկեսուրը մի կողմից հարցնում էր, թե կտորը որտեղի՞ց, Ստեփանը մյուս կողմից հարցնում էր, թե Մուրադն ինչի՞ է իրենց տան կողքով անցնում:

Էսպես դատ ու դատաստան արեցին Արուսիկի գլխին ու դատապարտեցին դատախարակչական ծեծի Ստեփանի կողմից: Դատապարտալը դուրս թռավ տանից ու վազեց անհայտ ուղղությամբ: Արդեն գիշեր էր, Ստեփանը վազեց ետևից, թե՛ աղջի, հետ արի, ոչինչ, ինչ եղավ՝ եղավ, մայրն ասաց՝ բան չկա, իրա ոտով կգա: Բայց էլ չեկավ Արուսիկը:

Առավոտյան լուրն ընկավ գյուղի բերանը, թե Ստեփանը կնոջը դուրս է արել... Սահակը գյուղամեջում հավաքվածներին պատմեց, թե գիշերը դուրս է եկել մաքուր օդ շնչելու ու տեսել է, թե ինչպես է ծաղկավոր շորով մի խիզան մտնում իր հարևան Մուրադի տուն...

Մանե Գրիգորյան



Կին

եղևիների մեջ կորած տղամարդդ փայտահատ է կտրված փայտի պես կրակին կուլ գնացող կին մոռացիր վառարանդ

բանի չորացած ճյուղ ունես անմխիթար ինչպես աղջիկը պոետ

թեզ սիրեցին օտար ծառերի տակ թեզ լքեցին անտեր բանաստեղծության պես երկար այս ճմռանը

տղամարդդ փայտահատ ի ծնե

երկար ժամանակ կտրեց թեզ կացնահարեց աչքերդ թևաթափ արեց մարմինդ հնազանդ ինչպես կացինը ծառին

միաջբանի իմ կին որ փնտրեցիր դոյակը թեզկից դուրս

ցուրտ կին մրսող կին կին որ մոխիր է դառնում

թեզ օդ թռցրեցին թեզ շաղ տվեցին հողի մեջ թեզ սպանեցին հերթով

կին որ չվախեցար հող դառնալուց մարմինդ չհանձնեցիր ջրին չմայրացար երբևիցե վախեցար սիրելուց ու շատերի մեջ փնտրեցիր թեզ

շան պես հաչացիր տղամարդկանց ետևից օտարների հետ սեր արեցիր հավատացիր ամեն գարնան հետ մարմինդ ծիլեր կտա

թեզ չհասկացան այստեղ

արևի պես տաք կին սիրուն կին

ու գիտես նա անառակ չէր բայց սիրում էր տղամարդկանց փոխել անկողնում մտրակը ձեռքին վագր վարժեցնող էր խաղում բայց ամեն վագր թրեյսի չէ

տղամարդը սև էր աղջկա համար մերկապար էր պարում իսկ ես ու նա մի օր բարում արքեսն էինք խմում ու նա ինձ իր հերթական տղամարդուն էր առաջարկում

հոգիս արտագրված աղոթքի պես սիրոտոտո մասին էր խոսում ու գիշերը ոռնում էր ներսումս

ու ես ազատությունը երբ մորդ հետ մի-մի սիգարետ եք ծխում ու խոսում թե ում հետ է քնում բաժանված հայրդ

ու ես ազատությունը երբ երագում ես թռչի թևով աստծուն հասնել ու բանի թռչուն է բմծծաղ տալիս իմ չստացված օրերի պոետիս

ես չգիտեմ թե ինչ բույր ունի սև տղամարդը ես նստել եմ աստիճաններից ամենաբարձրին ու հեթախա եմ պատմում ինձ -իմ սևամորթ տղամարդ իմ էթնոս աֆրիկյան իմ երագ արի միասին երեխա ունենանք ու դու կլինես մեր տղամարդը

հո լվացարարուհի չեմ դառնալու աման-չաման երեխա-մերեխա հասկանում ես իսկ երեխեն սիրո պտուղ ա ներսումս ոռնում եմ բազմագույն բազմահոտ բազմասեր սերերս

ես նրանց ետևից մի բաժակ բանաստեղծություն եմ լցնում ու գիշերը թանձրանում է ներսումս

Թե հավեն ունես, արի խաղանք: Հաստատ կիմանաս «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր»: Հետաքրքրի՛ բախտդ փորձիր: Խաղի կանոնները գրեթե անփոփոխ են, միայն չկան անձեռնմխելի գումարներ, հարցերն էլ ավելի քիչ են: Ընդամենը վեց ու կես հարց՝ չորսական տարբերակով: Փետրվարի 29-ին ուղարկիր քո ցուցակը, ես էլ պարտավորվում եմ նույն օրը հրապարակել ինքն: Խաղարկվում է մեկ միլիոն դրամ: Կատանաս ամբողջ գումարը, եթե մեր նախընտրած տարբերակները լիովին համընկնեն: Սկսեցինք:

Հարց առաջին

Ի՞նչ ես ուզում:

Ա. Ազատվել կեսից: Մրտանց ուզում եմ կորցնել կեսիս, որ անկախանամ, դառնամ ինքնաբավ ու վերջապես հանգիստ ապրեմ:

Բ. Մեկ միլիոն դրամ: Երկուսիս համար էլ խոսքը փողից թանկ է: Ինքս ինձ խոսք եմ տալիս. փետրվարի 29-ին կունենամ մեկ միլիոն դրամ, ուրեմն անվրեպ կկրակեմ, անհոգ եղիր:

Գ. Օգտվել «զանգ ընկերոջը» հնարավորությունից: Չանգեցի, բարեեցի ու կրկնեցի համարդ՝ 091 364344, որ ստուգեմ՝ ճիշտ ես գրել, թե ոչ: Պարզվեց՝ չես խաբել: «Գիտե՞ս, կարող եմ քո «միլիոնատեր»-ը, ուզում եմ հասկանալ՝ առաջին հարցի տարբերակներից որն ընտրել»: Հուշեցիր:

Դ. Իմանալ՝ վերջն ինչ կլինի: Մեկնարկը հեշտ է, չնայած թեթև սկիզբը հաճախ ծանր ավարտ է խոստանում: Դրա համար էլ գլխանց մեջդ սպանիր միլիոնատեր դառնալու հեշտագին ցանկությունն ու տրվիր խաղին ոչ թե հանուն փողի, այլ՝ ընթերցասիրությունից ելնելով:

Հարց երկրորդ

Ի՞նչ ես ման գալիս:

Ա. Հինգ մատիս պես քեզ գիտեմ. չես փոխվելու: Անընդհատ խանգարելու ես: Ազոավի մնան կոռույտ ես վրաս, մինչև վերջնականապես չզժվացնես: Ման եմ գալիս բայրուչ սպանող դրսորդ, վարձու մարդասպան, որ պատրաստ է մի միլիոնի դիմաց վերացնել կեսիս:

Բ. Եթե խոսք տված չլինեի, մտքովս էլ չէր անցնի պատասխանել: Հիմա ուշ է հետ կանգնել: Բեր նկարն ու փողը: Աշխատում եմ մաքուր, անցանկալի հետքեր չեմ թողնում: Գոն կմնաս, դեռ ոչ մեկը չի դժգոհել: Գումարը պետք է փոխանցես նախօրոք: Վերջնաժամկետը փետրվարի 29-ն է: Ման եմ գալիս քեզ պես մեկին:

Գ. Բոլոր մարդիկ էլ երեւի փնտրում են իրենց կեսին, եթե, ինձ նման, դեռ չեն գտել, հաստատ մի օր գտնելու են: Հետո խոսելիս տարօրինակ զգացում ունեցա. կարծես վաղուցվա ծանոթներ ենք, արդեն խաղացել վերջացրել ենք ու հիմա վերհիշում ենք ապագան: Հարցից չչեղվեմ, իմ տարբերակն է՝ գտնել կեսիս:

Դ. Ման եմ գալիս ինձ ման եկողին: Թող հիմա էլ ինձ ման գան ու գտնեն: Ես էլ դառնամ մեկի փնտրածը: Ամեն անգամ թվում է՝ լավ ընտրություն ես կատարել, հետո պարզվում է ճիշտ հակառակը: Ընտրություններն ավանդաբար կեղծվում են, բայց ոչ մեկին դաս չի լինում, որ էլ չընտրեն: Այլ է ընտրվելը. մեկից ավելի ձայն ստանալն արդեն հուսադրող է. ուրեմն մե՞նակ դու չես ասածներդ հավատում: Կարճ ասած, մի ընտրիր, թող քեզ ընտրեն: Այսինքն՝ ընտրիր Գ տարբերակը:

Հարց երրորդ

Կգա՞ս միասին գնանք ման գալու:

Ա. Կգալիս, բայց չեմ կարող: Ես քեզին խոսք եմ, աչքով աչք չունեմ քեզ հետ, ուր մնաց գամ հետդ ման գալու: Լավ էլ հասկանում ես. նորից քեզ տեսնել չեմ կարող, դա կնշանակի ազոավին կերակ-

րել, իսկ ես ուզում եմ նրան սատկացնել: Արդեն գտել եմ մեկին, ով հանուն միլիոնի պատրաստ է ամբողջ սեւ գործն անել: Մտադիր եմ նկարն ու գումարը փոխանցել: Բան չմնաց. շուտով ազատ կլինեմ՝ անտեր շան նման ինքս ինձ տրված: Հիշո՞ւմ ես, կռվելիս ինձ միշտ անտեր շուն էիր ասում:

Բ. Չէ, չեմ գա: Ընդհանրապես գրական խարդավանքիդ տրվել եմ հանուն խոստման ու գումարի: Որտե՞ղ ես կարդացել, որ քիչերը գրեսի իր մասին գրողի հետ: Մպասում եմ պատվիրատուիս, պետք է լուր տա, որ հանդիպենք՝ փոխանցի փողն ու գոհի նկարը: Հարցեր տալու սովորություն չունեմ, ինձ չի հու-

խատանքս մի օր հետո ներկայացնում եմ առաջին էջերում: Մի տեսակ ինձ գնահատված եմ զգում: Մեկ էլ՝ սրանման տարօրինակ հարողագրություններ. «Ես աննորմալի մեկն եմ, ապրում եմ իմ աշխարհում, տարօրինակ մտքեր ունեմ: Ոչ մի դեպքում չփորձես հետս ծանոթանալ կամ շփվել: Ման գալու առաջարկս կմերժես: Արագ կվերցնես փողն ու նկարը եւ կհեռանաս: Կհանդիպենք Չեռքերի մոտ, փետրվարի 29-ին»:

Գ. «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» վերնագրով պատմվածք: Կեսն արդեն կարդացել եմ, հասել եմ չորրորդ հարցին: Որո՞շ բաներ լավ չեն հասկացվում, բայց վատ չի, դուր է գալիս: Հերոս-

Ամեն Օհանյան

Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր



զում, թե ով, ում, ինչի համար է ուզում վերացնել: Ինքը սկսեց կյանքը պատմել. պատկերացնո՞ւմ ես, հեռախոսով լաց էր լինում, ձայնը դողաց, ասում է՝ խնդրում եմ, թող ցավ չզգա, թող ընդհանրապես չհասկանա, թե ինչ կատարվեց իր հետ:

Գ. Այո, հաստատ կգամ: Անձնապես դեռ ծանոթ չեմք, բայց ես քեզ արդեն մի քիչ գիտեմ. հեշ որ չլինի, գրածներդ կարդում եմ: Չեռքիդ համարն ունեմ, անունդ գիտեմ, էլ չասած ապագայի վերհուշի արտառոց զգացողության մասին: Չբոսնել-գրուցելով ոչինչ չեմ կորցնի: Հակառակ դեպքում՝ գուցե: Նախագուշացրել ես, թե հանդիպած չլինենք ու ճիշտ տարբերակը Գ-ն լինի, միլիոնս չեմ ստանա: Պայմանը պայման է, ես ազնիվ եմ խաղում:

Դ. Իրականում սա սխալ տարբերակ է, որովհետեւ տրամաբանորեն կա երեք տարբերակ: Չնայած հեղինակի համար կարող է եւ միակ ընդունելի լինել: Ամեն դեպքում, գժի գործ է ման գալու առաջարկ անել սեփական անձին: Ուրեմն՝ հաստատ ծուղակ է: Համոզված եմ՝ կհամարվի ճիշտ, դրա համար էլ ընտրում եմ հենց այս տարբերակը:

Հարց չորրորդ

Ի՞նչ ես կարդում:

Ա. Վերընթերցում եմ հազարերորդ անգամ վերջին գրածդ ու ուզում եմ հասկանալ՝ ով է սա գրել. ե՞ս, թե՞ դու: «Դու աննորմալի մեկն ես, ապրում ես քո աշխարհում, ինչ ուզում՝ մտածում ես: Ես աննորմալի մեկն եմ, ապրում եմ իմ աշխարհում, ինչ ասես, որ չեմ մտածում: Կհանդիպենք փետրվարի 29-ին Չեռքերի մոտ»: Կարդե՞մք՝ կտեսնենք: Ավելի ճիշտ՝ ես կապրեմ, իսկ դու՝ չէ:

Բ. Թերթից բացի, վաղուց ոչինչ չեմ կարդում. սովորաբար՝ կատարած աշ-

ներն ինքնարտահայտվում եմ խաղի պատասխան տարբերակների միջոցով, ընթերցողն էլ պիտի որոշի ամեն հարցի պարագայում, որ մեկին ավելի շատ հավատա ու կարող է ինքն էլ դառնալ միլիոնատեր: Ես էլ եմ ընթերցող: Հեղինակի հետ ժամադրված եմ, արդեն համաձայնել եմ, որ գնալու ենք միասին ման գալու, հույս ունեմ՝ կհաղթեմ:

Դ. Շատ էի ուզում ես հարցը տալ. ամենալավ հարցն է մարդուն ճանաչելու համար: Կյանքում ոչինչ չի կարող պատահել, որ մի տեղ գրված չլինի, ու հնարավոր չլինի մի տեղ կարդալ: Ինձնից բացի, ինչ-որ մեկը սա կկարդա, ու ես մտքերս կկիսեմ նրա հետ, ինքն էլ կհանդիպի ինձ: Կարդում եմ ինձ համար գրված գրքեր:

Ընթերցասիրահի օգնության հնարավորություն.

Ա-մեկ քառորդը

Բ-մեկ քառորդը

Գ-մեկ քառորդը

Դ-մեկ քառորդը

Հարց հինգերորդ

Ի՞նչ կատարվեց մեզ հետ փետրվարի 29-ին:

Ա. Փետրվարի 29-ին արթնացա գլխացավով: Լուսանկարների դարակից հանցի բոլոր ալբոմները, երկար փնտրում էի մեջս ավելի շատ ստեղծություն առաջացնող նկարը: Գտա մեկը, որտեղ իբր երջանիկ ես, բայց մե՞նակ չես, կողքիդ քեզ պես երջանիկ մեկն էլ կա, գլուխս գլխի տված՝ ժպտում եք: Կիսեցի ու դրեցի ծոցագրպանս: Մառնարանից երկու հուն նրբերշիկ հանցի, մեկը կուլ տվի, մյուսն էլ դրեցի տոպրակի մեջ ու վերցրի հետս, ճանապարհին պետք կգա: Չգացի՝ սուրճի առաջին կումն ինչպես է փոխում բերանիս համար, ես երեք կում ա-

րեցի ու դուրս եկա տնից՝ առանց հայելու մեջ նայելու: Քշեցի HSBS, հանցի հաշվեհամարից մի միլիոն դրամ: Բանկի աղջիկն ինձ չժպտաց, միայն հարցրեց. «Ամբողջ գումար՞ն եք հանում», ասեցի՝ այո: Մարդիկ կարծում են, թե հարուստ եմ: Աշխատանք ունեմ, տունուտեղ, լավ եմ հագնվում: Իրականում հետ գցած ամբողջ գումարս էր: Ինձ փող պետք չի: Փողոցում անտեր շուն տեսա, հարազատություն զգացի, բայց շատ քոտոտ տեսք ունեմ, վանող, խղճահարությունից բացի՝ ոչինչ չառաջացնող: Մոտեցա, զգաց, որ խղճում եմ, ինքն էլ ինձ ըստ արժանվույն գնահատեց ու գոմոաց: Նրբերշիկը հանցի ցերեֆանից ու գցեցի առաջը: Ոչնչացնող հայացքով նայեց ինձ, տեղում չորացա. աչքերը... մի տեղ տեսել եմ էս աչքերը: Մոտ չեկավ, սպասեց՝ մինչև հեռանամ: Քշեցի, շրջվեցի ու տեսա, որ կաղում է: Ոչինչ, շունը կաղալով չի սատկի: Մի քիչ շուտ հասա Չեռքերի մոտ: Օրը՝ արեւոտ, օդը՝ սառը, կյանքը՝ անցողիկ: Ազոավասպանս դեռ չկա: Նրան միշտ պատկերացրել եմ տխուր աչքերով, ոտից գլուխ սեւ հագած, ինչպես ես վայել է իրեն հարգող վարձու մարդասպանին: Մազերը մի քիչ երկար, գանգուր ու հետ սանրած: Հասակը՝ մետր ութսուն, թող բոլոր լինի: Գիշերները չի քնում, խիղճը տանջում է, ուզածն արժանապատիվ ապրուստի միջոց է: Գոն չի իր բախտից: Հոնքերի արանքում, չնայած երիտասարդ տարիքին, արդեն մի մեծ կնճիռ կա՝ շատ խոժոռվելուց: Եկավ, հեռվից նկատեցի, ինչ-որ տարօրինակ քայլերով, ոտքերի տակ նայելով, կարծես բան էր փնտրում: Մոտեցավ՝ հարյուր տոկոսով իմ պատկերացրածը, նույնիսկ կնճիռն իր տեղում էր: Բարեեցի՞նք, քաշվեցինք մի կողմ: Նկարն ու փողը հանցի ծոցագրպանիցս ու մեկնեցի իրեն: Նայեց կիսած պատկերին, անհանգստացավ. դե՞նքի արտահայտությունը միայն մի սկզբնաբաժնի փոխվեց, բայց բավական էր շփոթմունքը որսալու համար: Սկսեցի հանոգել. ես հանոգելու մասնագետ եմ: Ինչ ասես չասեցի: «Ինքս չեմ կարող անել: Համաձայնեցիր էժան գնով ստանձնել պատվերը, ասեցիր՝ խոսքը փողից թանկ է, քո բառերն են: Ինքը ընտրեցիր սկզբից, հենց առաջին հարցից Բ տարբերակը, հիմա հետ ես կանգնում: Մտածելու բան չկա. մարդիկ իրար ձրի էլ են սպանում, առանց փողի՝ լավության կարգով, ամեն քայլափոխի: Քեզնից բան չի գնում, դա քեզ համար սովորական մահ է, իսկ ինձ համար՝ կյանքի ու մահվան հարց»: Էլի ինչ-որ բաներ ասեցի, բայց անհողորդ էր: Գումարը հետ չի տալիս, զինված է, մեջս խաբված լինելու վախ մտավ: Ինչ-որ բաներ է բռնում. սկզբումքների ու խաղի կանոնների մասին: Այլընտրանք չունեմ, համաձայնում եմ իր խաղին: Վերջին անգամ նայում եմ Ազոավասպանի աչքերի մեջ ու հասկանում եմ՝ տխուր չեմ, փողոցում հանդիպած անտեր շան աչքերն են մեկից մեկ. մտածում եմ՝ երեւի բարեկամ եմ, ու կրակում:

Բ. Փետրվարի 29-ին արեւոտ օր էր, օդն էլ՝ սառը. իմ սիրած եղանակը: Առավոտ շուտ գնացի, թերթերն առա. կարդացի մի երկու սպանության մասին, հասկացա, որ մասնագետի գործ չի՝ ինքնուս սիրողական մակարդակ: Մտածեցի՝ սխալ է օրը ցերեկով պատվիրատուի հետ Չեռքերի մոտ ժամադրվելը, բայց արդեն ուշ էր ինչ-որ բան փոխելու համար: Սկսեցի պատրաստվել հանդիպման: Չեմ սիրում ոտից գլուխ սեւ հագնել, բայց գիտեմ, որ պատվիրատուս դա է ինձնից սպասում, կերպարս է թելադրում հագուստի ման ո՞ն: Առաջ մազերս կարճ



Ամեն Օհանյան

Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր

«»»»»»»»» 9

Էին, հիմա մի քիչ երկարացրել եմ ու հետ եմ սանրում. դա էլ տուրք է Հոլիվուդին: Մեկ էլ՝ հոնքերիս արանքի սպին, որ շատերի կարծիքով կնճիռ է: Հայելում ինձ նայելիս հիշեցի նախորդ օրվա բարձուն աղջկան, որ ամբողջ երեկո չժպտաց ու վերջում էլ ինձ էր ասում. «Դու դժգոհ ես քո կյանքից, դեմքիդ գրված է, ու տխուր աչքեր ունես»: Լուրջ գեղեցիկ կարիք չկա, բայց հետս միշտ ատրճանակ եմ վերցնում: Տնից դուրս չեկած՝ ուսիս ծրարեցի: Տեսա ազոռով էր, կռռալով թռավ գնաց: Կյանքում ծիտ խփած չկամ, իմ սկզբունքներն ունեմ, կենդանիներին վնաս չեմ տալիս: Մի անգամ եմ շեղվել, գիշերը գործից հետ էի գալիս, մի անտեր շուն վրա տվեց, մեծ էր ու կատաղած: Խփեցի, վնագտոցը կապեց, մոտեցա մի հատ էլ կրակելու: Ոչնչացնող հայացքով նայեց ինձ, տեղում չորացա. Չես չգնաց խփեմ, ասում եմ՝ շունը կաղալով չի սատկում, կարող է ասարի: Վերջը, ծերուն ուսիցս մաքրեցի, բայց մի թեթև հետք մնաց: Ռոտեցի ոտքով, ինքս ինձ հետ խաղալով, գնալ՝ հաշվարկված քայլվածքով, երբ մայրի սալիկները բաժանող գծի վրա ոտքդ չպիտի հայտնվի: Պատվիրատուիս հեռվից ճանաչեցի. հեծանվով էր եկել: Բարեկեցիք, քաշվեցիք մի կողմ: Նկարն ու փողը հանեց ծոցագրպանից, ինձ տվեց: Մինչև նկարը տեսնելն արդեն կասկածներ ունեի: Աղոտ գոյն էի, որ անազնիվ խաղ է հետս բռնել: Հենց նկարը տեսա՝ ամեն ինչ հասկացա: Ինքն էլ զգաց. դեմքի արտահայտությունը մի պահ փոխվեց, բայց դա էլ էր հերթը, որ շփոթմունքը հասկացվի: Սկսեց համոզել. ոնց որ համոզելու մասնագետ լինեի: Հերթ էր տալիս խոսելու: Հազիվ հասցրի հասկացնել, որ հարցը միլիոնը չի, մարդ սպանելը շատ ավելի թանկ արժի անգամ մեր աղքատ երկրում: Ուրիշ տարբերակ չկար, դրա համար եմ համաձայնել: Երկուսիս համար էլ խոսքը փողից թանկ է: Հետո ասեցի բառացիորեն հետևյալը. «Պետք է նախազգուշացնեիր՝ ում ես ուզում սպանել: Խաղի վերջում ես բացում քարտերը, անագնիվ ես: Ես էլ իմ սկզբունքներն ունեմ ու իմ խաղի կանոնները: Օրինակ, քեզ ծիծաղելի կրվա, բայց ծիտ չեմ խփում: Չես էլ հասկանում, որ ինքնասպանության նման մի բան ես ուզում ինձնից: Փողը հետ չեմ տա, ասե՛մ՝ ինչ կանենք: Մի տարբերակ կա: Թե հավես ունես, արի մահվան խաղը խաղանք միլիոնի վրա: Հաստատ կիմանաս ռուսական պատախաղը՝ ռուկետակա: Տես, հանում եմ բոլոր փամփուշները, թողնում եմ միայն մեկը: Բո ուզած խաղն է, հաղթող չկա, միայն՝ պարտվող, մեկ էլ՝ վերապրող: Դա էր ուզածդ, չե՞: Սկսեցիք, առաջինը դու ես»:

Ք. Փետրվարի 29-ին արթնացա թե չէ՝ վազեցի համակարգչի մոտ, բացեցի էջը, ինչպես ես խոստացել էի, դրել ես պատասխանների ճիշտ տարբերակները: Բինգոտոտ... Ես հաղթել եմ: Հավատացի քեզ, ինձ, խաղին, խոսքին ու հաղթեցի: Ես միլիոնատեր եմ: Լողացա, նախաճաշեցի, մի երկու բան ինտերնետում փորփրեցի՝ մինչև մի քիչ ժամանակ անցնի. անհարմար

զգացի առավոտ շուտ գանգել, միգուցե դեռ քնած լինես: Մի քիչ էլ ոտս կախ գցեցի սոցիալական ցանցերում, հետո գանգեցի: Բարեկեցի, միանգամից ճանաչեցիք, դե, արդեն հանդիպել էինք մի անգամ: Ինձ շնորհավորեցիք հաղթանակիս կապակցությամբ: Ժամադրվեցիք Չեռքերի մոտ: Օղը սառն էր, օրը՝ արեւոտ, տաքսիով եկա: Դանապարհին ծաղկավաճառից երկու երիցուկ առա: Տրտնջաց, ասեց՝ փնջով եմ ծախում, հատիկով չի լինի: Համոզեցի. ես համոզելու վարպետ եմ: Մինչև հասա՝ արդեն սպասում էի, ես անգամ հեծանվով էի, բայց չզարմացա, քանի որ դրա մասին նախօրոք կարդացել էի քո պատմվածքում: Չքոսեցիք այգում, ձյուն չկար, հալվել-գնացել էր: Վաղը գարուն է, ու ես միլիոնատեր եմ: Գնացիք թեյ խմելու: Դեսից-դեմից գրուցեցիք, մի տեսակ չափազանցված ուրախ էիք, անընդհատ խնդմնում էիք: Հետո անպասելի հարցրիք, մի միլիոնի նրբերչիկ կառնե՞ս թափառական շների համար: Դրա մասին էլ էիք գրել, ես էլ արդեն յուրօրինակ պատասխան էի մտածել: Ասածս սրտով էր երեւի, քանի որ անկեղծ ծիծաղեցիք: Երկար խոսում էիք հինգերորդ հարցի մասին, ու երկուսս էլ համաձայն էինք, որ որոշողը մենք ենք, թե ինչ կկատարվի մեզ հետ փետրվարի 29-ին: Հայացքս, ինձնից անկախ, անընդհատ գոյն էի դիմացս, սեղանին դրված ուռուցիկ ծրարին. վրան գրված է՝ HSBS, իսկ մեջը՝ իրոք, մեկ միլիոն դրամ: Առաջարկեցիք հաշվել: Չե, հավատում եմ: Հետո ասեցի բառացիորեն հետևյալը. «Մի խաղն ավարտվեց, մյուսին անցնելու պահն է, հիմա իմ հերթն է, ես եմ խաղացնողը: Հավես ունես, արի խաղանք: Հաստատ կիմանաս «Միրում է, չի սիրում»-ը. ամենապարզ խաղն է»: Վերցրիք մեկական երիցուկ ու սկսեցիք պոկել թերթիկները: Միասին բարձրաձայն վերհիշում ենք վերջին հարցը: Ժպտում ենք իրար, որովհետեւ համոզված ենք՝ պատասխանը միայն երիցուկի թերթիկները գիտեն:

Գ. Նախորդ երեքից ես ոչ մեկը: Ես ունեմ իմ տարբերակը: Մարդիկ իրենց կեսը դրսում են որոնում, բայց կարող է ներսում էլ լինել: Անկախ դրանից, երկուսը, մի տեղ երկար մնալով, երբեմն քարսվում են, ու մեկն ուզում է ոչնչացնել մյուսին: Պապս ասում էր՝ կռիվը խաղի վերածի, միշտ հաղթող դուրս կգաս: Ես խաղը գլխանց սրտովս չեք. արի մի ասա, այ անտեր շուն, միլիոն ունես՝ գնա վայելի, ինչի՞ պիտի տաս ինչ-որ մեկին: Իմ պատասխանն է. առանձնապես ոչինչ էլ տեղի չունեցավ փետրվարի 29-ին, սովորական արեւոտ օր էր, բայց օղը՝ սառը, ուղղակի գնացի Չեռքերի մոտ՝ պարզելու՝ կեսս ինձ սիրում է, թե չէ:

Հարց վեցուկետրորդ
Խաղն ավարտվում է, իսկ հիսունհիսուն օգնության հնարավորությունն անագնիվ է չկիրառել, ինչը ես սիրով անում եմ՝ հեշտացնելով խաղացողի գործը ու հանելով Ա եւ Դ սխալ տարբերակները:
Միրում է, թե՞ չի սիրում:
Բ. Միրում է:
Գ. Չի սիրում:



Էդուարդ Հարենց

Ջարթնե՞լ, թե՞ չգարթնե՞լ...
Բանականության երկմտանքը ծիկրակում էր հրեշտակային քնի գույների ետևում, որոնցից մի-մի կաթիլ կուլ տալով՝ նրա հայացքներն անդրադարձնում էին Վան Գոգի ականջի նյարդաթելերից այնպիսի սեփական արծազանքներից հյուսելով ծայնի սարդոստայնը, որն ամեն Աստծո օր թնդողակի արթնությունը հագնում է իր սրտին՝ որպես պոեզիա՝ խուլերի համար...

– Ջարթնե՞լ, թե՞ պոեզիա:
– Ավելի շուտ՝ գարթնե՞լ... պոեզիայից, այսինքն՝ թոնդողակ...

Իսկական Թաքուրքու

Մահվան հեռավոր արվարձաններում հեղուկարական անդորրի բարձերը միշտ կարմիր են, ինչից հրեշտակների քունը տանում է: Իսկ նրանց նորածին երազների աղմուկից զրգովում են օգոնի վերին ենթամաշկերը: Փոփոխաբեզ ճերմակը լցվում է տիեզերքի շնչափողը, և Աստված մոռանում է հանկարծ իր աղոթքի 27-րդ հիերոգլիֆը, որն ընկնում ու գալարվում է Հավերժության պորտին՝ իբրև ականջող...

Եվ ամեն մի կիսալուսնից հետո, մինչ ամեն մի լիալուսնից առաջ– իմ շնչի վրա կոհակ առ կոհակ, Հայր, բուսնում են ահա գլխիվայր– մուգ սպիտակ վարդի փշեր՝ չապրած օրերը քո...

Շայմատային Նուվել

Կապույտների վերջին դալտոնիկ ծաղրածուն անսեռ խորանարդներ է պոկում Մահվան գանգոկրից՝ հերթական աճապարության համար: Ու հերթական դողերոցից նրա մաշկը ջազ է քրտնում

մանդարինի համով...
Ու հերթական անգամ
Արթնացումի զարգացող ոսկրախտի միջով դեպի ներս են թափվում ժանգոտած հեծանիվներով հրեշտակներ, որոնց հետևից վազում են աշխարհի բոլոր հայրերը՝ ծակ երազներով, ու բոլոր հարբած երեխաները մանդարինի փտած կլեպներ ու թափանցիկ շշեր են նետում: Կանգառներում խոստովանահայրերն իրենք են խոստովանում իրենց մոտեցող պոռնիկների սրտերին: Արվարձաններում մորթում են աքաղաղներին՝ կոկորդներից դուրս հանելու արծաթյա դրամները՝ եկեղեցու հանգանակության համար...

հ.գ. Արամ Պաշյան...

Մութություն տարիներ

Գիշերները հայրս կաթիլ-կաթիլ ծեծում էր մորս՝ հավաքելով նրա արցունքները, որպեսզի ես առավոտյան կարողանամ լվացվել դպրոց գնալուց առաջ...
.....
Հիմա մայրս չի ծեծում, բայց ինչ-որ մեկն ամեն գիշեր կաթիլ առ կաթիլ հավաքում է հորս աչքերի լույսը, որպեսզի...

Առավոտն ի՞նչ է:

Չլինի՞ հանկարծ դասից ուշանամ...

Հաղորդակից անոթներ

Ավազներից կիտոտոտն վիհն իրենց իսկ ազատության և դուրուկը սքեմի մեջ փաթաթած՝ կթաղեն անապատում:

Տիեզերական հոգեբուժարանի լաբորատորիայում ծիրանի կորիզը կճառագի՝ որպես ժառանգական ուղեղ...

ՔԱՆԱԹՈՒՄ

1. Ամեն ինչ այնքան անսովոր է...

Ծառերը ճիշտ ժամանակին Շողկում են, Տերև հագնում, Փթթում Ու... մերկանում...

2. Լույսերը թացանում են Ապակիներիս գոլորշու վրա...

3. Ջարիուրելի քնքշություն Եվ մաղձոտ մեծամտություն...

Իմ վայրի էությունից Անտեղիտալի անգթությունն է Մնում Չվարթ...

4. Մայրերին Անտառի հիշողությունը Շառեր է բնակեցրել...



ԱՇՈՑ ԳԱՐԻԻԵԼՅԱՆ

Ուղղածից ստվերները Ստույգ ժԱՄԱՆԱԿ են ցուցում...

Իսկական անտառում Ստվերներ չեն լինում... Մարդկանց տեսքով...

5. ԾԱՌԻ ԿՐԵԾՆ
Ծառի ավիշը Թուրք է դարձել...

Եվ ես ճանաչում էի Տարիների փոշուց Գորշացած երեսով Բոլոր մարդկանց, Որոնցից Ծառի հոտ էր գալիս...

Հոգիս շարժվում է Դեպի հյուրալի շուրթերը՝ Ցանկությունների նախադրանք՝ Հրեշավոր ու վեհ, Շուրթերս դողում են Հաղթանակող Գթասրտությամբ...

Ամրոցները՝ աղոթատեղի...

Հանգչել չեմ ուզում, Ուզում եմ հող դառնալ Աչքերիդ մեջ...

Արևին զգված Խոնավ աչքերը Ծլարձակում են Բո հիշողությունը...

Գևորգ Թումանյան



Ընդամին
Օրեր շարունակ
և ալարում
և մոռանում էի
բացել բառարանը

թեպետ
մոտավոր զգում
կանխավայելում էի բառը

միաժամանակ
ընդամինի մասին իմացա

Յոթ
թե ութ տարեկան էի

մարդիկ մահանում են
ես ևս

չեմ համակերպվում

Տասնմեկ
կամ տասներկու տարեկան էի

ընկերներս բացատրեցին
թե ինչպես են ստեղծվում երեխաները

ապշել
գուցե հիմար
սակայն պարզաբանող հարցեր էի
տալիս

Յնարավոր չէ
հնարավոր չէ
ընթերցել բոլոր գրքերը գրվածքները
թեկուզ գեղարվեստական
թեկուզ բանաստեղծական

հնարավոր չէ
սիրել բոլոր ազգությունների կանանց
գունե երեքին
գունե երկուսին
լավ մեկին

հնարավոր չէ
վայելել հատապողից մինչև միրզ
ծգվող մեղրամիսը
ճանաչել համային գամման
բանաբարեղենների

հնարավոր չէ
ըմպել ավազանը տարաթունոյ
խմիչքների
համտեսել երանգապակակը
խոհանոցների

ավար
ավար
ավար

Ընկույզ եմ կլպել
յոդից սևացել են մատներս

մենք բոլորս
Աֆրիկայից ենք

այս վարկածը
մի բանի օր էլ
ինձ դուր է գալիս

Զգրված ևամակ
Աղջիկս իրենն էր պնդում
միմիայն հեծանիվ
ես իմը համակարգիչ

Նեղացած
այրպես էլ
Ձմեռ պապին
Նամակ չգրեցի

Աղջիկներիս ուրախությունը
1.
Որպես սովյալ
ոռնացող գայլ
պարտադիր գորշ
մոտենում եմ խժռելու
քուն մտնող աղջիկներիս

2.
Շալակում եմ հերթով

մածուն մածուն
թթված մածուն
մեկ ու հիսուն

3.
Փաթաթվում են
օղակներս
ոտքերիս

բայլեմ
պիտի

Անքնություն
Չեմ դժգոհում
ինքս ինձ հետ եմ

Շատախոսներից պրծում չունեմ
հուսամ
ավագ աղջկաս տաղանդը
տարիքային առանձնահատկությունն է

Մի ժամանակ շնորհալի ընթերցող էի

Մի տեսակ
չի ստացվում հանգիստս
սիրոս արտառոց միապաղաղություն
է ուզում

Չսիրեցի
և չկարողացա ընծայագրել իմ գրքերը
սակայն
սպասում եմ ուրիշներից

Որպես բանաստեղծ, հավանաբար, էլ
չկամ: Ո՞վ է մնացել: Ո՞վ է ծնվում:

Ծառը թեթևած է եղել: Յատել են:
Յատել են մեջտեղից: Կարծում եմ՝
դիտավորյալ: Զգված առանդամ:

Կին, երեխաներ, ծնողներ, ընկերներ,
հարազատներ, դպրոց... Ինձ համար
ժամանակ չկա, համարյա չկա: Եթե
լինի, շատ լինի՝ ի՞նչ եմ անելու:

Իմ բախող բերել է. տարեկան երկու-
երեք անպետք գիրք եմ նվեր
ստանում: Կան հռչակավոր գրողներ,
խմբագիրներ, հրատարակիչներ,
քննադատներ, որոնց նվիրում են
տասնյակ, երկու տասնյակ կամ շատ
գրքեր:
Դե նրանք էլ երևի մի հնար գտնում
են:

ՆԱՐԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԹԱՎՋՈՒԹԱԿ

Վիլյամ Սարոյանին էին
լվանում: Մի գիրուկ կին ջրի
շիթը պահել էր ուղիղ դեմքին:
Հետո հանգամանորեն իջավ
մինչև կոշիկների ծայրը:

Նա կանգնած է դեմ դիմաց:
Նա՝ արտասովոր քթով, տա-
րօրինակ հին կոշիկներով ու
դեմքի այնպիսի արտահայ-
տությամբ, որ երեխաների
ուշադրությունն է գրավում:
Ուսին ամբողջ շուրջով փռվել է
տիրական թավջութակը: Այդ
արքայական գործիքը ափ-
ստում է նվագել անցորդնե-
րից մուրալու համար: Կանգ-
նել է... քայլում է... տուն... մի
տուն լիք էրեխա ու թավջու-
թակ... բազմոցին փռված
հայր... մի բանակ բարեկամ-
ներ: Փակվում է սենյակում,
ամբողջ կրթով համբուրում,
շնչում ու արտաշնչում գործի-
քը:

-Փող բերե՞լ ես,- հայրն է:
-Չէ:
-Բա էդ փետի կտորը ինչի՞
էիր հետո տարել...

Երեսունվեց ականջ, ածե-
լու պես սրված, սպասում էր
ու երեսունչորս աչք (հորեղ-
բայրը կույր է) նայում էր
սենյակի դռանը... հեծկլտոց...
թավջութակի թագավորական
նվվոց...

Ընկույզի փայտից պատ-
րաստված գործիքը սեր էր
բուրում ու արտասովոր քթով
սովերը խենթանում էր այդ
սիրուց...

Բռնակն իջավ, ու կոշիկնե-
րը հանեցին նրան խցից:

Անատան տատի՝ միս ու-
տելու ճպճպոցը ցրում էր հա-
սուն բարախապալար հիշեց-
նող լուռությունը:

Մեծ աչքերով փոքրիկ գար-
միկը իջեցրեց հոնքերը մինչև
քթարմատը.

-Հիմար քեռի ես...

Նրա փեշը նազանքով
վերցնում էր գետնից փոշին
ու լցնում բաց ոտքերին: Մեջ-
քը համաչափ շարժելով, հա-
ցի տուպակն ուսին՝ գնում էր:
Արցունքը գլորվելով ընկավ
քաղաքի փոշու վրա: Ոտքերը
ցեխտվեցին: Նրանից խակ
ընկույզ էր բուրում:

Հիմար քեռին ամեն օր այ-
գում պաշտում էր ամեն մի
լարը, քիթը իջեցնում, որ ան-
ցորդները գումար չտան, ու ե-
րեսունվեց ականջ ամեն օր
լսում էր չէ:

-Գնա գործարան, կոշիկ
կկարես: Գորոյի ծոցը էդ փե-
տի կտորը, կոշիկ կկարես:

-Հայրիկ...

-Վերջացրի՞նք..

Գիշերը ընկույզի հոտը ար-
ցունքի խոնավությունից
խեղդելու չափ լցրել էր խու-
ցը:

Դուռը բացվեց: Մեծ փոր,

հետո միս կտրելու կացին...
մի ալարկոտ հարված ու սի-
րելի ճրթոցից վեր թռավ...

Կոշիկի գործարան... տո-
սինձի՝ ընկույզին հակառակ
հոտ ու սևացած, երկար
մատներ:

Մեծ բակում նրա քայլված-
քի առանց ռիթմի թրխկոցը
բոլորը ճանաչում են: Մոսն-
ձոտ մատներով սովերը ա-
ռաջ է գնում: Տագնապի հոտ
է գալիս:

...Արքայական գործիքը
ամբողջ շուրջով փռված է
եղել բակով մեկ: Փայտի
կտորներից մեկի վրա՝ երեկ-
վա հետքերը:

Ուսից կախ հացի տուպա-
կը ռիթմիկ խփում է մեջքից
շատ լայն կոնքերին, փեշը
համբերատար հավաքում է
քաղաքի փոշին ու շաղ տա-
լիս ոտքերին:

Խակ ընկույզի բույր... խոր
ընկած աչքերը, իրենց հետ
քարշ տալով երկար քիթը,
կարոտով ու քնքշությամբ
թեքվեցին... Թավջութակը՝
հացի տուպակն ուսին ու եր-
կար փեշով...

ՊԵՂՈՆ

Նա կարճահասակ էր,
փոքրիկ գլուխ ուներ ու ան-
համեմատ մեծ ականջներ:
Խոր բնիկների մեջ աչքերը
անհանգիստ շարժվում էին ու
վրայից միշտ ծանր երաժշ-
տություն էր լսվում: Նրան
Պեղոն էին ասում: Ես ինքս
շատ հետո իմացա իսկական
անունը՝ Արման:

Առավոտյան տանտիրու-
հու եփած ճաշի կենացաղա-
յին հոտից ջղայնացած,
կարճ ոտքերը կատաղորեն
խփելով գետնին՝ դուրս
թռավ տնից: Երբ բարկանում
էր, ժանիքները դուրս էին
ցցվում շրթունքների արան-
քից, իսկ հոնքերը փոխանակ
իջնելու, ինչպես բոլորի մոտ,
բարձրանում էին:

Կապույտով լցված գար-
նանային երկիցքը ոչինչ չա-
սաց: Նա համառորեն հա-
ճույք ստանալով՝ լսում էր
ինչ-որ մեկի ճղճոցը ականջ-
ների մեջ, ու թվում էր, թե հա-
ճույք է գգում:

Կատաղած չափեց ամբողջ
քաղաքը գերմանական գոռ-
գոռոցի տակ ու քայլեց դեպի
համալսարան: Չէ, իհարկե,
ոչ դասի: Մի տեղ կա այս ահ-
ռելի շենքում, որտեղ հիմնա-
կանում հավաքվում են տա-
րօրինակ ուսանողներ, կար-
դում են, երաժշտություն
լսում, տարօրինակ կատա-
կում ու ամենամատուր ձևի
ծիծաղում, հետո անմիջապես
լրջանում ու խելոք դեմքերով
շարունակում կարդալ:

Մի պահ երաժշտությունից
կարվելով՝ Պեղոն դռան
վրա կարդաց. “Հասարակա-
կան գիտությունների ընթեր-
ցասրահ”: Խցկվելով ներս՝
աչքերով գտավ ընկերներից:
Բոլորի հայացքում էլի նույն
կիսածաղորակական արտահայ-



տությունը՝ «ինչ լավ արիր, ե-
կար» դիմակով:

Պեղոն միգուցե սիրում էր
մարդկանց, բայց համարյա
վախենում էր նրանցից ու իր
հասցեին ամեն կծու կատա-
կի հետ ժպտում էր, չգիտես՝
սիրուց, թե քծնանքից: Ա-
կանջներում շարունակում էր
գոռալ կատաղած երգիչը:
Պեղոն էլ չէր դիմանում:
Ժանիքները երևացին: Հոն-
քերն արդեն բարձրանում
էին... Մեկ էլ...

Նա կարճահասակ էր, եր-
կար մազեր ուներ ու մեծ աչ-
քեր, որոնք անընդհատ
ճպճպոցում էր՝ մեծ բերա-
նին խաղացնելով լայն ժպի-
տը: Պեղոն նրանից ամենա-
շատն էր վախենում ու ամե-
նաշատն էր... սիրում:

Մինչ նա շրջվեց, բոլորը
փոթկացրին: Երգչի ձայնա-
լարերն էլ չէին դիմանում: Նա
գլուխը կորցրած՝ դուրս թռավ
ընթերցասրահից ու ընթացքի
մեջ հասցրեց զգալ երկար
մազերի բույրը: Հետո դռան
մոտ դանակի պես ցցվեց, որ
ընդմիջ չմոռանա:

Այդ օրերին ես հանձնում
էի իմ վերջին քննությունները:
Հանկարծ մեկը թրմփոցով
նստեց կողքիս: Մեղանի վրա
կարճ մատներ են, որ ջղային
դողում են ու... լալիս:

- Գիտե՞ս, մենք շատ լավ
ծանոթ չենք, բայց դու ինձ
միշտ ժպտում ես, միգուցե
մտքում մի ուրիշ բանի վրա
ես ժպտում, բայց ինձ միշտ
թվում է, թե ինձ... Կներես, մի
քիչ կողքիդ կնստեմ:

Մինչև երեկո նստեց իմ
հարևանությամբ ու երկար
պատմում էր ճղճացող երգչի
մասին, նրա մասին, որ սի-
րում է երկար մազերի հոտը
ու էլի ինչ-որ բաներ:

Երեկոյան արդեն ժպտում
էր, հեռանալիս ասաց, որ վա-
ղը բանակ է գնալու:

Առավոտյան հիշեցի փոք-
րիկ ժանիքներով իմ հերոսին:
Երկի հիմա ինչ-որ տեղ հի-
շում է մազերի թարմ բույրն ու
ափերից դուրս եկած երգչին:

1 30+31+30+31+30+31+30+31+30+9 հավասար է 150+124+9 սա էլ հավասար է 274+9 եղավ՝ 281: Սրան էլ գումարենք վերևում գրած 1-ը՝ կատարելով:

2 ԷՐԵՆԵՔԸ

Կար ու չարունակում է լինել մի մարդ: Նա կանգել էր կամրջի բազրիքին ու պատրաստվում էր իրեն ու իր կենսագրությունը ցած նետել կամրջից: Կամրջի տակից հայտնվում է մի էրեխա, որ բացի լռելուց ուրիշ բան չէր կարողանում պատմել: Նա կամա կամ անկամա մի քիչ խանգարում է մարդու և մարդու կենսագրության անկմանը: Մարդն ամեն ինչ կամ համարյա ամեն ինչ կամ համարյա իր իմացած ամեն ինչն անում է՝ բացատրելու համար Լուռին, որ իր ու իր կենսագրության անկումն անժխտելի անհրաժեշտություն է այս կյանքի համար: Ուր որ է, Լուռն արդեն լռության բազմապատկով պիտի համաձայներ նրան, հայտնվում է երկրորդ էրեխան: Նա կամա կամ անկամա, բայց ինձ թվում է՝ կամա, խանգարում է Լուռին հանդգած շատախոսին: Ինչու կամա, քանի որ Կույրերն ունեն մի կարևոր հատկություն, որ չունեն մյուս կույրերը...

Կույրն ու Լուռը որոշում են ամուսնանալ: Սա քիչ է, որոշում են նաև, որ Շատախոսը պիտի լինի իրենց բավորը, ամուսնության գրանցողն ու վկան, պատկող տերտերն ու վերջ...

Կար, բայց... շարունակում է լինել մի մարդ՝ չգիտեմ: Գիտեմ միայն, որ Լուռը մի օր մոտեցավ կամրջի բազրիքին ու պատրաստվեց ցած նետել իրեն ու իր կենսագրությունը:

3 ՎԱԳՐՈՒԿԻՆ

Վագրի մեքենայի մեջ խցկված վագրերն իրար էին պատառոտում: Սա կարծես սեպտեմբերին էր, թե հոկտեմբերին: Նոյեմբերին էր, դեկտեմբերին, հունվարին կամ փետրվարին... Թե՞ մարտին էր, բայես, չեմ հիշում լավ, բայց... մի րոպե. կարծես ապրիլ ամիսն էր, թե՞ մայիսը կամ հունիսը: Իսկ եթե հուլիսին կամ օգոստոսին լինի, կխանգարի: Դե եթե չէ, ուրեմն, դա ոչ մի ամսում էլ չէր, դա քո ծնվելու հազարամյակում էր: Դե գիտե՛ս, էդքան էլ հաճելի բան չէ Վագրի մեքենայի մեջ տրորվելը: Փորձել ե՛ս. խորհուրդ չեմ տա, որովհետև Վագրի մեքենաները շատ անբուժելի կախվածություն են առաջացնում: Բա՞: Եթե մի անգամ գլուխդ վստահես Վագրի մեքենային՝ պրծա՛վ, էլ գլխիդ տերը չես:

Մի անգամ, վաղվա օրվա պես հիշում եմ, կրկեսում աշխատում էի որպես վագրերի բերանը գլուխ մտցնող: Հերթական ելույթն էր: Ես էլ հերթական անգամ, գլուխս դրեցի ուսերիս մեխած պարանոցի ու մտա արեմա: Նայում եմ էս վագրի՝ աշխարհն արհամարհող աչքերն, հասկանում, որ էս խեղճի հետ ինչ-որ բան էն չի: Մտքումս ասում եմ. «Սիրուն ջան, դե բաց բերանդ, ես էլ ինձ փակեմ ու նշագեղծերդ համբուրեմ, պրծնենք էս խայտառակությունից գնանք ամեն մեկս մեր բունը՝ դու քո մի կտոր միսը, ես իմ մի կտոր հացն ու տելու»: Վագրը ժպտաց իր ժանիքների ներսի կողմով, ես՝ արտաքին: Բացեց բերանը, գլուխս մտցրեցի: Ելույթն ավարտվեց: Մի ծափահարություն ու աղմուկ էր, որ էլ չասած: Վերադարձա իմ սենյակ, նստեցի հայելու դիմաց, որ մի քիչ հանգստանամ, շորերս փոխեմ ու գնամ տուն: Մեկ էլ տեսնեմ ի՞նչ. գլուխս չկա... Այ մարդ,- ասեցի մտքումս, էս ավստրալի մի քիչ առաջ իր տեղում էր, ի՞նչ էղավ սրան: Նայում եմ էս կողմ, էն կողմ, էն մյուս կողմ՝ չկա: Ի՞նչ անեմ, լավ: Առանց գլխի, ո՞նց եմ աշխատավարձ ստանալու, մի կտոր հաց ուտելու: Էլ ի՞նչ: Տխրաժպիտ վերադարձա տուն՝ ծնկներով ու արմունկներով հաշվելով ճանապարհի ամեն քառակուսի մետրը: Առանց գլխի ճանապարհ գնալը շատ տհաճ զբաղմունք է, ասեմ քեզ: Մի

խոսքով, հասա տուն, տեսնեմ երկու ծանրոց դռան դիմաց՝ մեծ ու փոքր: Բնակարանաբար, քանի որ մարդ եմ իմ անհայտ ու հայտնի թուլություններով կամ պատճառներով, առաջինը բացեցի մեծ արկղը: «ՆՈՐ ԿՅԱՆՔ» ֆիրմայի արտադրության լվացքի մեքենա էր: Բացեցի երկրորդը՝ գլուխս էր... Պատկերացրու մեր ուրախությունը. փաթաթվել ենք իրար ու հո չենք լացում, հո չենք լացում...

Հա, էդպես, գլուխս վարժեցրած կապիկի պես թռավ նստեց պարանոցիս, ոնց որ պաղպաղակի գունդ: Տուն էի ուզում մտնել՝ կարդացի ծանրոցներն ուղարկողի հասցեն, ու... գլուխս կորցրի. մեր տան հասցեն էր, ուղարկողն էլ... Վագրուհին էր:

4 ՀՐԱԲՈՒՄ Նվիրված Յունեսկոյի խելացի որոշմանը

Մի օր, չեմ հիշում ինչ պատճառով ու դեմքի ինչ արտահայտությամբ, սարն անորոշ նայեց հորիզոնին ստորակետած լուսնին: Հեռվից, որն այդքան էլ հստակ

5 ՔԱՄԻ - ՄԱՄԻ

Ուրեմն, Քամին մտավ կիսաբաց պատուհանից ու վարագույրը դանդաղ հղիացավ: Պատուհանը փակվեց ու վարագույրը ծնեց: Սենյակն իբրև ծնարան՝ լցվեց նորածնի լռությամբ: Նորածինը լծվեց իր առաքելությանը: Առաքյալը քայլեց: Քայլերը խառնվեցին հողին ու անմահացան: Անմահությունը սուզալողով հասավ արգանդին Երկրի: Երկիրը մի թեթև ցնցվեց ու թեքվեց իր հայտնի առանցքով: Երկիրը ծռվեց, այո: Երկիրն, այսպիսով, ուղղվեց՝ առանց հենման կետի հիմար տեսության: Հիմար տեսությունն, այսպիսով, դառավ օդ ու մտավ կիսաբաց պատուհանից, որ վարագույրը դանդաղ հղիանա: Ուրե՞մն...

11 ՄՈՐՈՒՔԻ ՍՊԻՏԱԿ ՄԱՋԸ

Մի տգեղ օր էր: Արթնացա՝ այն գեղեցիկ դարձնելու: Մոտեցա հայելուն: Սովորական մոտեցումս ցնցուղին՝ այս անգամ անսովոր էր.

ԳարՍու

282

ՀԵՔԻԱԹՆԵՐ /Ըարֆից/

հեռավորություն չունեք, լսվում էր ազդածայն ասեմ, ահա՞ ծայն ասեմ, թե ինչ ասեմ՝ չգիտեմ: Շտապօգնության մեքենայի մեջ՝ մի հղիի դանդաղ օգնում էին, որ չծնի: Պատկերացրու՝ Պատկերացրու՝ ծնեք. մեքենան պիտի քոռ ու փոշման ետ դառնար արդեն նախկին հղիի տուն, ու կույր ավստասնծով կրկնատես դառնար հիվանդանոց. կյանքում մի բան էլ կիսատ կմնար, հասկանում ես: Դա հաճելի չէ: Մի խոսքով: Սարը կիսատ թողնելով նայելը, սկսեց պատկերացնել, թե հեռվի ծայնատարում ինչ է կատարվում: Պատկերացնելուց անմիջապես հետո, նա սկսեց վերապրել հղիին: Խեղճ սար դու խեղճ սար. ատամները սեղմել էր, քրտինքն անաղուհացի պես լքում էր նրան, սարը գալարվում էր, տնքում, անլսելի մրմնջում...



Երբ լողացա - մի փոքր մաքրվեցի գիշերվա ու մի կնոջ հետևանքներից, զարմանքս ներցավով տեսավ, որ մորուքիս առաջին սպիտակ մազը սիրալի ողջունում է ինձ, որը մատներիս արանքում նվաղեց հաճույքից, ինչպես կինն ու գիշերահետո: Թե ասեմ վախեցա այս նորածին փաստանագրությունից, կխաբեն ինձ, թե խաբեմ ինձ, էլ չեմ հարգի ինձ, թե չհարգվեմ ինձնից, էլ չեմ գրի, եթե չգրեմ, կվախեմանա... Ու չվախելու համար՝ չվախեցա: Զվախելու համար սկսեցի մտածել. «Բայց ինչու՞ սպիտակ և ոչ կարմիր»: Հա՛, սպիտակող մազն ու իմաստության ատամը գուցե կապ ունեն իրար հետ, բայց ինչի՞ս են պետք իմաստությունն ու ավելորդ ատամնացավը: Ու երբ ատամիս բաց ներվն իր բազմամատությունն իմաստավորեց ուղեղիս մեջ, հասկացա, որ ես... մորուք չունեմ:

12 ՊՍՆՈՆ

Գիտե՛ս... դա պատկերացնելու բան չի, է, այր, որ ասեմ. «Վա, չե՞ք պատկերացնի, թե Պստուն, ինչքան էր ուզում երեխա ունենալ...»: Դա... դա մի ուրիշ բան է... ո՞նց ասեմ... մի տեսակ առանձնահատուկ ու... նույն առանձնահատկությունից տարբերվող... Մի խոսքով. մեր Պստուն, մանկություն չի ունեցել ու հիմա, ուզում է մանկություն ունենալ: Պստուն իր ապրելուց շատ ուզում է երեխա ունենալ, պատկերացնում է եր... բայց, այր, պատկերացնելու չի, է, սա... սա... ...Երբ Պստուն ծնվեց, ոչ ոք ուրախ չէր: Տխուր մարդ էլ չկար. դե Պստույի ծնվելու

մասին ամենաառաջինն իմացավ ինքը՝ Պստուն: Մայրն անգիտակից պառկած էր ու Պստուն չէր ուզում մորը խանգարել. նա ծնվել էր շատ հեշտությամբ, քանի որ, շատ հեշտությամբ էլ... սաղմնավորվել էր:

Պառկած կարմիր լճակում՝ խաղում էր սեփական պորտալարի հետ՝ ժամանակ առ ժամանակ քորելով պստիկ քթի ծայրը. «թե ասա, ինչ ես մտածում, այ պուճուր, հը՞: Կամ՝ էդ պորտալարը հո խաղալիք չի, այ երեխա...»: Բայց ո՞վ ասեր. մայրը դեռ անգիտակից էր, հայրը մեռած: Մյուս բարեկամ - հարազատներին չեմ ճանաչում ճիշտն ասած:

Հա, ուրեմն, էս Պստուն, վերջը ծանծրացավ լռության հիմար ժպիտից ու բա՛րձր, շատ բարձր ծայնով... ծիծաղեց: Մայրը փորձեց զարթնել՝ չստացվեց: Ու Պստուն լողալով մոտեցավ մորը՝ ճանապարհին ծամելով պորտալարը, որ կտրի: Պորտալարի կտրվելը, մոր ստիճքին հասնելն ու փակվածայն ժպտալը մեկ եղավ:

... Պստույի ներքը լցվում էր կաթնագույն ջերմությամբ: Մայրը չզարթնեց, հայրը մեռած էր, ու... Պստուն վարակվեց ՁԻԱՀ-ով... Ու հիմա՝ Պստուն ուզում է երեխա ունենալ:

Պստուն ուզում է երեխա ունենալ իսկական տղամարդու անմիջական միջամտությամբ: Բայց, քանի որ Պստույի բոլոր տղամարդիկ վարակվել էին ՁԻԱՀ-ով ու ... - եք, Պստույին մնում էր մի ելք, բայց նա այդ ելքը չէր գտնում:

Հետո պիտի ծնվեր Պստույի մեծ մանկությունն ու ցույց տար ելքը:

13 ՄՈՐՈՑ

Մի քանի օր առաջ էր: Նստած էի կամ կանգնած կամ պառկած: Բայց մի քանի օր առաջ էր ու գլխացավ ունեի: Բթամատով կամ ցուցամատով կամ միջնամատով կամ մատնեմատով կամ ճկույթով քորում էի գլխամաշկս: Բայց... լավ, որևէ մատովս էր: Քորեցի - մորեցի - քորեցի՝ գլխամաշկս ծակվեց: Մի քիչ էլ քորեցի - մորեցի՝ գանգուկս ծակվեց: Մի քիչ շատ դժվարությամբ՝ ծակեցի ուղեղիս թաղանթը:

Ուժեղ ցավ գացի. Կամ բթամատս էր կամ ցուցամատս կամ միջնամատս... մի խոսքով. սուր ցավը մատներիցս մեկով հասավ սիրտս: Ձուռով դուրս քաշեցի. խելքոտվել էր, մտքի գույն ունեց, ու ցավի հոտ էր գալիս հենց այդ մատից: Չեմ հիշում. Մի քանի օր, թե մի քանի դար առաջ էր գլխացավիս պատմությունը, բայց նույն օրը, սրտիս տեղն ասես ցավող ատամի հացադուլ լինեի: Գլխացավիս քորել-մորել-քորելու միջոցը կիրառեցի սրտիս համար՝ հնգամատ բուժանձնակազմով: Ամեն ինչ նույն ձևով ստացվեց, մաշկ, ոսկոր, բարակ թաղանթ ու սիրտ: Միտոս չհեռացրի: Մաքրեցի բակտերիաներից ու մանրէներից: Այս անգամվա ցավը շտապեց գլխուղեղ: Այս անգամվա գլխուղեղս կարգադրեց ողունուղեղիս այն մոռացված շարժումը /հիշում էք, երբ աջ բթամատը վերծիգ ժպիտով նստած գրկաբաց ափին՝ առաջանում էր դիմացիդ մարդուն... ի՞նչ լավ ժամանակներ էին/:

Բարևող ձեռքս շոյեց, ապակեց, հարթեցրեց, հաշտեցրեց, քանդակեց, նկարեց, սիրեց ու... Մի խոսքով՝ բացի քորել-մորել-քորելուց:

*** Մի քանի օր, թե մի քանի հազարամյակ հետո էր. Հասկացա, որ Երկիրը նման է սրտիս, սիրտս՝ գլխուղեղիս: Հասկացա, որ պատահական ցավեր չեն լինում: Հարունակում եմ որոնել Մոլորակը: